

17-18(692-693)

28.07.2023

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանձարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар ●

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՄԱՍՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ



Հուլիսի 24-ի երեկոյան տեղի է ունեցել Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի հրատապ առջանց մամուլի ասուլիսը միջազգային և սփյուռքի շուրջ 100 լրագրողների համար՝ 35 երկրից, որոնց մեծամասնությունը լրագրողներ էին, ներառյալ՝ աշխարհի ամենաառաջատար լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Նախագահի բացման խոսքը ներկայացվում է ստորև:

Ես ծանոթագրական խոսքս կբաժանեմ երեք հիմնական մասի՝ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) շրջափակում, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև հակամարտություն և միջազգային հանրությունից ակնկալիքներ:

225-օրյա շրջափակում ու 40-օրյա պաշարում

Արդեն ներկայացվել է Արցախի շրջափակման նախապատմությունն ու համատեքստը: Հստակ է, որ Ադրբեջանը միջազգային անպատժելիության պայմաններում շարունակաբար խստացնում է Արցախի ժողովրդի դեմ իրականացվող բռնաճնշումները՝ էթնիկ զտման անթաքույց նպատակով և էթնիկ ատելության ու խտրականության քաղաքականության հիմքով:

Այս ընթացքում ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատա-

րանը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ընդունել են իրավական և քաղաքական պարտադիր ուժ ունեցող վճիռներ Լաչինի միջանցքով մարդկանց, մեքենաների և բեռների անխափան, երկկողմանի տեղաշարժի ապահովման վերաբերյալ: Բացի այդ, Եվրախորհրդարանը, Եվրախորհրդի խորհրդարանական վեժաժողովը, տարբեր պետությունների օրենսդիր և գործադիր իշխանություններ, հեղինակավոր միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները հստակ պահանջներ և կոչեր են ուղղել Ադրբեջանի իշխանություններին՝ դադարեցնել Արցախի շրջափակումը և գերծնալ ուժի կիրառումից կամ դրա կիրառման սպառնալիքներից: Այնուամենայնիվ, Ադրբեջանը ոչ միայն անտեսել է դատարանների որոշումներն ու միջազգային հանրության պահանջները, այլև՝ գնալով ընդլայնել և խորացրել է շրջափակումն ու ռազմական սպառնալիքները:

1. Շրջափակման նպատակները

Արցախի շրջափակման միջոցով Ադրբեջանը հետապնդում է մի շարք նպատակներ, այդ թվում՝

• Երկարաժամկետ: Ձերբազատվել Արցախի ժողովրդից՝ իրականացնելով Արցախի ամբողջական էթնիկ զտում և ուժի միջոցով փակե-

լով հակամարտության էջը:

• Միջնաժամկետ: Բռնի կերպով հպատակեցնել Արցախի ժողովրդին, կազմաքանդել Արցախի Հանրապետությունը և դրա դիմադրողականության համակարգերը, Արցախի բնակչությանը մղել արտագաղթի, փլուզել Արցախի տնտեսությունը, ձեռք բերել լրացուցիչ ճնշման միջոց Հայաստանի վրա, մասնավորապես, Ադրբեջանի ու Նախիջևանի միջև Հայաստանի տարածքով արտատարածքային ճանապարհի ձեռք բերելու նպատակով:

• Կարճաժամկետ: Արցախի ժողովրդին ենթարկել հոգեբանական ահաբեկչության, մշտական վերահսկողություն սահմանել Արցախի մուտքի և ելքի հանդեպ, ստեղծել անտանելի պայմաններ Արցախի մուտքի և ելքի հանդեպ, ստեղծել անտանելի պայմաններ Արցախում ապրելու համար, փորձարկել և հատել հայկական կողմերի կարծիքը, հեղինակազրկել անվտանգության և կայունության միջազգային և տարածաշրջանային երաշխիքները:

2. Շրջափակման ձևերը

• Մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների տեղաշարժի արգելափակում:

• Ենթակառուցվածքների, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի, գազի, ջրամատակարարման և կապի խաթարում:

• Անվտանգային շրջափակում՝ հաճախակի հարձակումներ ու սադրանքներ, տարածքների ինտենսիվ ռազմականացում, կրակոցներ գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնող անձանց ուղղությամբ:

• Հոգեբանական շրջափակում՝ ագրեսիվ հռետորաբանություն, ուժի և ուժի սպառնալիքի կիրառում, անորոշության և վախի մթնոլորտի ստեղծում:

• Տեղեկատվական շրջափակում՝ ապատեղեկատվության և կեղծ լուրերի տարածում, միջազգային փաստահավաք առաքելությունների, լրագրողների, հումանիտար կազմակերպությունների մուտքի արգելափակում:

3. Շրջափակման հետևանքները

Շրջափակման հետևանքով մենք այսօր գտնվում ենք հումանիտար աղետի պայմաններում, որը դրսևորվում է կյանքի բոլոր ոլորտներում՝ սննդից մինչև առողջապահություն, գյուղատնտեսությունից մինչև կրթություն: Արդեն արձանագրվում են շրջափակման ուղղակի ու անուղղակի հետևանքով մարդկային մահեր, նորածին երեխաներից մինչև տարեց քրոնիկ հիվանդներ:

• Սննդի մեծ սղություն կա, քանի որ շրջափակումից առաջ Արցախում օգտագործվող սննդի մոտ 90%-ը ներկրվում էր Հայաստանից: 40 օր է՝ ոչ մի կիլոգրամ սնունդ չի մտել Արցախ, իսկ տեղական սահմանափակ արտադրանքը և դրա մատակարարումը մեծապես տուժել են վառելիքի ու այլ անհրաժեշտ նյութերի բացակայությունից:

• Վառելիքի և այլ անհրաժեշտ նյութերի ու պարագաների գրեթե բացակայության պատճառով չի կատարվել գյուղատնտեսական աշխատանքների 80%-ը, նույնիսկ հացահատիկի բերքահավաքը կազմակերպվել է խիստ մասնակի ծավալով, դադարել են նույնիսկ շրջափակման ընթացքում մասնակիորեն գործող տնտեսական ձեռնարկությունները, գրեթե ամբողջությամբ դադարել է հանրային տրանսպորտը, խիստ դժվարությամբ են աշխատում առողջապահական ու այլ առաջին անհրաժեշտության ծառայությունները:

• Առողջապահական համակարգում տարբեր դեղատեսակներ սպառվել են, մնացած մասը հասնում է ծայրահեղ սահմանաչափի՝ ռիսկի տակ դնելով մարդկանց կյանքն ու առողջությունը, կրկնապատկվել են չձմեղած ու նորածին երեխաների մահվան ու բարդություններով ծնվելու դեպքերը, հղիների շրջանում սակավարյունությունը հասել է 90%-ի, դադարել են բոլոր պլանային հետազոտություններն ու վիրահատությունները,

հարյուրավոր բուժառուներ չեն կարողանում մեկնել Հայաստան ու արտասահման բուժման նպատակով, էլեկտրամատակարարման ամենօրյա խափանումների ու անհրաժեշտ սպասարկման բացակայության պատճառով շարքից դուրս են գալիս բժշկական կարևոր սարքավորումները:

• Ձեռուցման ու սննդի խնդիրների պատճառով տարբեր ժամանակահատվածներում լրիվությամբ կամ մասնակի փակվել են դպրոցներն ու մանկապարտեզները, հոգեբանական ահաբեկչության ու թերսնման պատճառով մեծապես տուժել են երեխաների ընկալունակությունն ու առաջադիմությունը, հարյուրավոր ուսանողներ չեն կարողանում մեկնել Հայաստան և արտասահման՝ կրթությունը շարունակելու նպատակով:

• Արդեն 196 օր է, ինչ Ադրբեջանը խափանում է Հայաստանից Արցախ էլեկտրամատակարարումը, ինչի հետևանքով ամեն օր առնվազն վեց ժամով հովիտային անջատումներ են տեղի ունենում, տնտեսական բազմաթիվ ձեռնարկություններ դադարել են գործելուց: Իսկ գազամատակարարումը ամբողջությամբ դադարեցված է արդեն 158 օր շարունակ՝ հանգեցնելով բազմաթիվ սոցիալ-տնտեսական հետևանքների:

• Մասնավոր հատվածում փակվել են բոլոր արտադրամասերը, գրեթե ամբողջությամբ փակվել են բոլոր ծառայություններ մատուցող ընկերությունները, մասնավոր հատվածում աշխատողների ավելի քան 80%-ը դարձել է գործազուրկ, որն ավելի քան 15.000 մարդ է, դադարել են 3.700 բնակարանների կառուցման աշխատանքները, որոնք նախատեսված էին 2020թ. պատերազմի հետևանքով տեղափոխված ընտանիքների համար, տնտեսության ուղիղ վնասը կազմել է շուրջ 430 միլիոն դոլար, որը նախատեսված տարեկան ՀՆԱ-ի շուրջ 50%-ն է: 4

ՉԵՆՔ ՆԱՀԱՆՁԵԼՈՒ ՄԵՐ ՆՊԱՏԱԿԻՑ ՀԱՄԱԴՐՈՎՐԴԱԿԱՆ ՄԻՄԱՄԱՆԱԿՅԱ ՀԱՆՐԱՅԱԿՔ

Հուլիսի 25-ի երեկոյան Արցախում Ստեփանակերտի Վերածննդի և ՀՀ-ում՝ Երևանի Ազատության հրապարակներում տեղի ունեցավ համաժողովրդական միաժամանակյա հանրահավաք:

Նպատակն անփոփոխ է՝ աշխարհի ուշադրությունը հրավիրել Արցախում և Արցախի շուրջ ընթացող իրադարձությունների վրա՝ միասին «ոչ» ասելու Արցախի շրջափակմանը, մեր միասնական կամքը հասցնելու աշխարհին՝ Արցախը չի՛ եղել, չի՛ լինի Ադրբեջանի կազմում: Հանրահավաքն ավարտվել է խոնարհումով և երդմամբ: Երևանում՝ Եռաբլուրում, Ստեփանակերտում՝ Եղբայրական գերեզմանոցում:

Համաժամանակյա հանրահավաքը մեկնարկեց Ստեփանակերտում՝ Արցախի Հանրապետության, Երևանում՝ Հայաստանի Հանրապետության օրհներգերով:

Ամբողջությամբ կամ մասնակի ներկայացնում ենք հնչած ելույթներից մի քանիսը, որոնք լավագույնս են բնութագրում Արցախի մաքառումը և մեր ժողովրդի կամքը:



ԱՐՑԱՄԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Տեր Կրթանես եպիսկոպոս ԱՐԲՈՒՅԱՅԱՆ, Արցախի թեմի առաջնորդ

- Բոլորս էլ քաջատեղյակ ենք, թե ինչ է կատարվում Արցախում, և ինչ խնդրումներ են տեղի ունենում մեր հայրենիքի այդ սրբազան մատուցի շուրջ: Ինչպես ժամանակին Խրիմյան Հայրիկն էր բնութագրում Հայկական Հարցը, ճիշտ նույն իրավիճակում ենք այսօր

գտնվում մենք: Մի մեծ առևտուր է ընթանում. Արցախը դրված է վաճառքի, իսկ երկաթե շեղբավորները, ախորժակները սրած, սպասում են իրենց պատառին: Որքան էլ խաղաղության սին հույսերի գինով հարբենք ու փորձենք մեզ խաբել, դրանից իրականությունը չի փոխվի և ինչպես խրոնիկ հարբեցողի դեպքում է լինում, ամեն ինչ գնալու է դեպի կործանում:

Արցախը ենթակա չէ՛ վաճառքի, Արցախը



Աստվածապարզ կայական աշխարհի անբաժան մասն է, Արցախը սրբություն է, հող է, պատմություն է, և այն պատկանում է միայն ու միայն մեզ՝ հայերին: Այսօր կանգնել Արցախի կողքին՝ կնշանակի կանգնել մեր խղճի ու արդարության կողքին, կանգնել Արցախի կողքին՝ կնշանակի կանգնել քաղաքակրթության և մարդու իրավունքների կողքին, կանգնել Արցախի կողքին՝ կնշանակի հավատարիմ մնալ Աստծո պատգամներին: 2

ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ

ՉԵՆՔ ԵՎ ԵՆՔ ԵՆԻՆՑԵԼՈՒ ՄԵՐ ԵՊԱՏԱԿԻՑ

ԱՐԹԱՒԻՆ՝ ԱՆՎԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅ



1 Աստված Մեր է, և այդ Սիրո վրա հիմնված եղբայրությունն ու հայրենասիրությունն են դառնալու մեզ այնքան անհրաժեշտ երկաթե շերտեր: Բնականաբար, մարդիկ և ազգերը ժամանակ առ ժամանակ հնձում են այն, ինչը սերմանել են ու աճեցրել, բայց այսօր մեր բոլոր գործած մեղքերից ավելի վախեցնողն ու սարսափելին անտարբերության 8-րդ մահացու մեղքն է: Եթե մենք կրավորական դիրքով ու անտարբերությամբ ենք հետևում վերը նշված գործընթացներին, նշանակում է՝ գործակից ենք դառնում Արցախը վաճառողներին:

Երոզություն են խնդրում համեմատության համար, բայց մի՞թե անհրաժեշտ է երթողային տրանսպորտի կամ էլեկտրակենտրոնացված մայրիկին փնտրելու ճանապարհին: Արդեն գրանցվել են հոլիների թերսնուցման պատճառով չճանաչված երեխաների վաղաժամ մահվան դեպքեր, տրանսպորտի և դեղորայքի բացակայության պատճառով բազմաթիվ հիվանդներ, հատկապես նրանք, ում կյանքը կախված է արյան պարբերական դիալիզից, բառացիորեն սպասում են, թե երբ պիտի մեռնեն: Էլ ի՞նչ է պետք, որպեսզի հասկանանք իրավիճակի լուրջությունը, որպեսզի մեր սրտերը ճնշվեն, և գիտակցենք, որ սա մեր ընդհանուր ցավն է, և որ մենք անելիք ունենք:

Այսօրվա իրականությունը գալիս է ևս մեկ անգամ մեզ հիշեցնելու, որ Արցախյան շարժումը չի ավարտվել և դեռ շարունակվում է: Այն մեզ համար պիտի դառնա համապագորյա հացի պես, դառնա արելակերպ, առաքելություն, գաղափար և գործ: Արցախյան շարժման ընթացքին հազարավոր հայրերի-մեր հերոսացան, անմահացան և դարձան հզոր հոգևոր բանակ, որոնց հոգևոր հայացքի ներքո մենք չպիտի սխալվենք, այլ ամբողջ ազգով դառնալով մեկ միասնական բռունցք՝ այդ շարժումը հասցնենք իր բարի ավարտին՝ ազատ, ինքնիշխան և անվտանգ Արցախի կերտմանը: Այսօր Արցախն է Հայի ինքնության և արժանապատվության շարժիչ ուժը: Կորցնելով Արցախը՝ կորցնելու ենք մեր ինքնությունն ու արժանապատվությունը:

Սիրելի՛ արցախցիներ, ձեզ ենք փոխանցում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական սերն ու աղոթքը և վերստին հիշեցնում, որ Հայաստանյայց Առաքելական մեր Մայր Եկեղեցին աշխարհասփյուռ իր թեմերով կանգնած է ձեր արդար պայքարի կողքին և շարունակելու է ամեն ջանք գործադրել՝ ազգային մեր երազանքի իրագործման համար: Սիրելի՛ հայրենակիցներ, ի Հայաստան, յԱրցախ և ի սփյուռու աշխարհի, թոթափե՛ք մեզանից անտարբերության կործանարար չարիքը, ոտքի՛ ելնենք ազգովին և կանգնենք Արցախի կողքին:

Օրինյալ է մեր ուղին, որովհետև Աստված մեզ հետ է, և եթե Աստված մեզ հետ է, ո՞վ կարող է լինել մեզ հակառակ: Ուստի, որպես համազգային միասնության վերանորոգման մի նոր մեկնարկ, միասնաբար խոնարհվենք և մեր աղոթքով Աստծու ողորմություն և պահպանություն խնդրենք հայոց ազգի և Արցախ աշխարհի համար...



Հանլետ ՊԵՏՐՈՍՅԱՆ, պատմաբան, Արցախի Տիգրանակերտի արշավախմբի ղեկավար:

- Ես չեմ ուզում անդրադառնալ այն խնդիրներին, որոնք հանգեցրել են այս իրավիճակին: Դա մեր ժողովրդի ամենադաժան պարտություններից մեկն է, երբ հայությունը չկարողացավ ստեղծել առողջ քաղաքական համույթ և ամեն մեկն իր տեղում մսխեց հաղթանակը ու մեզ հասցրեց այս օրվան: Սա ուզում են հակադասել՝ ի՞նչ պետք է մենք անենք: Լացել կարող ենք, հուզվել կարող ենք, անարդար աշխարհին մեր գայրոյթն արտահայտել կարող ենք... Ես դիմել եմ աշխարհի իմ բոլոր գործընդերներին, հորդորել եմ նրանց, բայց ես այսօր ասում եմ ձեզ՝ մենք պիտի լուծենք մեր հարցերը: Նախ և առաջ՝ մենք: Ի՞նչ ճանապարհ մենք կարող ենք ընտրել այս ծանր վիճակում, ունենք համապատասխան միտք, ճանապարհ: Թող որևէ մեկն ասի՝ եկեք այս քայլն անենք, և մենք բոլորս միասին անենք: Ես Տիգրանի քաղաքն եմ գտել: Եվ Տիգրանի քաղաքը ինձ ինչ-որ բան է սովորեցրել. ով գիտի Տիգրանի պատմությունը, գիտի նրա բարձրամակար, անկունը, գիտի նրա իմաստությունը: Եկեք այսօր մի քիչ մտածենք, թե վաղը ինչ պիտի անենք: Արցախին այսօր պետք է անվտանգություն և հաց: Ո՞վ կարող է դա ապահովել: Ես, դու, բոլորդ եկեք այդ քայլի մասին մտածենք, եկեք մի բան անենք, որ վաղը այսպես չլինի, թե չէ պաթոսախեղ անել, մեծ-մեծ բռեր ստել, գոչել, հետո գնալ տուն, վաղը մորից նույն իրավիճակում հայտնվել՝ ընդունելի չէ: Ո՞ր են մեր ազգի խելոքները, ինչու՞ մեկը չի ասում՝ սա՛ արեք, այս մեկն արեք: Նորից եմ ասում՝ Արցախին՝ հաց և անվտանգություն: Սատանայից իմաստուն եղեք. խորամանակ եղեք, ճարպիկ եղեք, սատանայի հետ պայմանագիր կնքեք: Մեզ պետք է հաց և անվտանգություն: Մնացած գաղափարները՝ դրանից հետո:

ՉԱՄԱՆԱԳՆԵՔ ՈՒ ԶԿՅԱՏԵՆՔ



Անահիտ Ղարաղազարյան, Արցախի Հիրակացու Ճեմարանի տնօրեն:

- Երեք տարի առաջ այլ էին բոլորի և իմ ծրագրերը, ապագայի տեսլականն առավել պարզորոշ էր, վստահ առաջ էինք նայում, թեև միշտ էլ հոգու խորքում թաքցնում էինք պատերազմի վերսկսման ահը: Այո, անիծյալ պատերազմը ստիպեց խմբագրել մեր բոլորի ծրագրերը, վերադասավորել առաջնահերթությունները: Սակայն ոչ երբեք՝ նպատակները: Իսկ մեր նպատակը մեկն է՝ ապրել ու արարել մեր նախնայաց երկրում, պաշտպանել սեփական հողում հարատևելու մեր աստվածատուր իրավունքը, հզորացնել ու շենացնել մեր Արցախը: Հենց այս նվիրական նպատակին հասնելու մտախեղությունով ետ եկանք այստեղ պատերազմից հետո: Եկանք երկաթյա կամրջով ու վճռակալությամբ, հայի, արցախցու պայքարող ու անկուն ոգով արցախյան պատմության նորագույն էջերը գրելու:

ցու պայքարող ու անկուն ոգով արցախյան պատմության նորագույն էջերը գրելու:

Բախտորոշ ու ճակատագրական օրեր ենք ապրում մենք հիմա: Բոլորս գրում ու կերտում ենք Արցախի նորագույն պատմությունը, որտեղ ստորակետ կամ վերջակետ դնողը կրկին մենք ենք: Ու չպետք է փնտրել արդարացումներ, անվերջ մեղադրանքներ հնչեցնել ուրիշների հասցեին. ոչ ոք օգնության ձեռք չի մեկնի, քանի դեռ ինքներս այն չենք խնդրում: Եվ ուրեմն՝ եկեք շարունակենք, անդադար բարձրացնենք, աղաղակենք, անմահաց բախենք բոլոր ատյանների դռները, նամակներով հեղեղենք միջազգային կառույցներին, ոչ մի վայրկյան հետ չկանգնենք ու չմտածենք, թե՛ ի՞նչ օգուտ, մեկ է, ամեն ինչ կանխորոշված է: Ո՛չ և նորից՝ ոչ: Չմահանցնենք ու չվիատվենք, մինչև վերջ պայքարենք, որովհետև նահանգի տեղ ուղղակի չունենք: Մենք երկաթյա օղակում ենք, որի կապակցներն օրեցօր անխղճորեն սեղմվում են, և որը միայն միասին կարող ենք փշրել: Ի՞մ որպես մոր ամեն օրն անցնում է երեխաներիս համար սնունդ հայթայթելու տագնապալից ողիսակամի պես: Շրջափակման արդեն յոթերորդ ամիսն է, այդ եզրագիծն էլ ենք հատում: 226 օր: Աշխարհի բզկտվող քարտեզի վրա, այս մի փոքր հողակտորում 120 հազար հայ, 30 հազար երեխա հումանիտար ճգնաժամի մեջ են: Դա սոսկ բառակապակցություն չէ: Դիմում եմ համայն հայությանը, աշխարհի մարդկությանը. ուղղակի մի պահ պատկերացրեք, թե ինչ կզգայիք, եթե ստիպված լինեիք առավուտից քաղաքի մի ծայրից մյուսը կամ գյուղից քաղաք ոտքով գնալ ու հասնել՝ մի ինչ-որ բան հայթայթելու հույսով: Ի՞նչ կզգայիք, եթե սրտի կսկիծով ամեն օր հաշվեիք, թե որքան կբավականացնի տան՝ նվազող քանակով ամբարած սնունդը: Ինչպե՞ս այդ սրտի մրմունջի մեջ փորձել մանկության անհոգ, ուրախ հուշեր ապահովել ձեր երեխաների համար: Ես ամենավատ երագում անգամ չեի պատկերացնի, որ ստիպված կլինեմ կրկնել մանկությանս հետպատերազմյան զրկանքները, բայց այս անգամ՝ արդեն երեխաներիս հետ: Բայց ինչևէ, ես չեմ վիատվում: Չեմ վիատվում, քանի որ մեր նպատակը մեկն է՝ այն վսեմ է, անսակարկելի: Ուստի եկեք արժանապատվորեն տանենք մեզ բաժին հասած զրկանքները և գործենք համուն արյանք գծված սահմաններով մեր երանելի Արցախի համար, որտեղ մեր զավակները կապրեն խաղաղ երկրի տակ իրենց երկնային պահապանների ներքո: Եվ՝ ուրեմն, թող որ ամեն օրը հետհաշվարկի մեկնարկ դառնա յուրաքանչյուրիս համար սեփական խղճի մտոց հաշվետու, հետևապես նաև Հայաստանի փրկության համար մեր ունեցած թեկուզև փոքր, բայց կենսականորեն անհրաժեշտ դերակատարման համար: Հրաշքներ հենց այնպես չեն լինում: Դրանք տառապալից պայքարի փոխհատուցումն են: Իսկ եթե պայքարում են, ապա բացառապես՝ հաղթանակի համար. Վահանով կամ վահանի՝ վրա:

ԶԿԱ ՄԻ ՓՈՍ, ՈՐԻՑ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԼԻՆ ԴՈՒՐՍ ՊԱԼ



Դավիթ ՀԱԿՈՒՅԱՆ, ՀՀ վաստակավոր արտիստ

- Ես գիտեմ մի պարզ ճշմարտություն, որ աշխարհում չկա մի իրավիճակ, որից ելք չլինի: Զկա մի փոս, որից դուրս գալու հնար չլինի: Ինչի՞ ենք սպասում, որ ինչ-որ մեկը գա մեզ փրկի: Ե՞րբ է եկել փրկելու, որ այսօր

փրկի: Ո՛չ որ չի փրկելու մեզ: Ինչո՞ւ ենք այսքան համակերպվել նվաստացման հետ, պարտվածի հետ: Ե՞րբ չենք ունեցել պարտություն: Ե՞րբ չենք ունեցել հաղթանակ: Բայց այսքան հիասթափված: Թե՞ ձեզ թվում է՝ սա վերջն է: Կանք: Այսօր մենք ապրում ենք հայ ժողովրդի ամենաճարտաբան վիճակը: Մենք ծայրահեղ վիճակներ ապրել ենք մի քանի անգամ, քարտեզի վրա չենք էլ եղել: Երկու անգամ ունեցանք այդ հնարավորությունը, երկու անգամ էլ կորցնում ենք, որովհետև գուցե թե չունենք իմաստություն: Ո՞ր են մեր քաղաքագիտական մտքերը: Հպարտանում ենք, որ հայ գիտնականը աշխարհին տվել է այս մեթոդն, այս կամ այն գյուտը: Մեզ ի՞նչ է տվել... Եթե կարծում եք, թե ես գիտեմ վաղը ինչ պետք է անենք, խորապես սխալվում եք: Ես էլ չգիտեմ: Ես երբեք որևէ մեկին որևէ բան սովորեցնելու, նույնիսկ խորհուրդ տալու միտում չեմ ունեցել ու չեմ ունենալու երբեք: Բայց մի բան հաստատ գիտեմ, որ այսօր մենք մեկ գերխնդիր ունենք: 10 միլիոն հայ կա աշխարհում, ազգովին ունենք մի գերխնդիր՝ այսօր մենք կանգնած ենք գոյաբանական խնդրի առջև: Եվ եթե կարծում եք, թե այսօր Արցախի հարցն է, խորապես սխալվում եք: Եթե այսօր մենք ուշքի չգանք, Աստված մի արասցե, կորցնենք Արցախը, վաղը ցույց ենք անելու Սյունիքի համար, մյուս օրը ցույց ենք անելու Տավուշի համար: Եվ հետո օպերայի սրճարաններում երջանիկ քեֆ ենք անելու, որովհետև Երևանը Հայաստան է՝ և վերջ: Ուշքի՛ եկեք, ոտքի՛ կանգնեք:

ՂԱՂԱՐԵՑՐԵՔ ՅԵՂԱՄԱՍՆԱԿԱՆ ՇՐՋԱՓՈՒԿՈՒՄԸ



Լարիսա ԱԼՎԵՐԴՅԱՆ, Հայաստանի մարդու իրավունքների առաջին պաշտպան:

- Նախ և առաջ ողջունում եմ Արցախում ապրող մեր բոլոր հայրենակիցներին, որոնք այսօր պահպանում և պաշտպանում են համայն հայության պատիվն ու արժանապատվությունը:

Արցախի Հանրապետությունը իրավունք ունի, միջազգային իրավական սուբյեկտություն ունի, նա ծայն ունի, պարտավոր են լսել ու պատասխանել: Սա է պատճառը, որ մենք պահանջում ենք՝ դադարեցրեք ցեղասպանական շրջափակումը, բացե՛ք ձեր աչքերը: Ովքեր չեն մասնակցում այդ շրջափակման դադարեցմանը, նրանք մասնակցում են ցեղասպանությանը: Նրանք կանգնելու են միջազգային դատարանի առջև, ինչպես կանգնելու է նաև Ադրբեջանը: Արցախը երբեք չի լինելու Ադրբեջանի կազմում: Ո՛չ՝ Ադրբեջանի կազմում այդ բանախոսներին և կարգախոսներին: Դրանք հակաիրավական են և իրականությանը հակառակ: Ինքնորոշման իրավունքը աստվածատուր իրավունք է և չի՛ հակասում միացումին: Բոլոր նրանք, ովքեր ուզում են հակադրել ինքնորոշման իրավունքը միացումին, նրանք պարզապես չգիտեն ո՛չ պատմություն, ո՛չ իրականություն, ո՛չ իրավունք: Դրա համար ևս մեկ անգամ ասում ենք՝ բացե՛ք կյանքի ճանապարհը: Վերջ տվե՛ք ցեղասպանական շրջափակմանը: Մեր նպատակը մեկն է՝ ազատ Արցախ:

ՍԱ ՎԵՐԶԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՄԵՐՈՒ ՆԱԼԹԱԿՅԱՆ, 2016թ. ապրիլյան և 2020թ. պատերազմների մասնակից

- Ես այստեղ եմ որպես շարքային քաղաքացի, որպես շարքային զինվոր և ներկայացել եմ իմ պատրաստակամությունը հայտնե-

ՊԱՅԵԱՐ



տուն սարքելու համար: Սա վերջին հնարավորությունն է, դուրս եկեք դեպի խոնարհում...

Ազատության կանչով համախմբվենք և երթով շարժվենք դեպի եռաբլուր:

Հիշենք ՑԱՍԱՎԵԼԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ Բաղիկ Չարոյանյան, ժողովրդական արտիստ



- Ու այս հայի մարմնացույցը պիտի միշտ ապրի Արցախում, պաշտպանի՝ ու պահպանի՝ մեր սրբությունները, մեր պապերի, հայրերի, որդիների գերեզմանները, մեր սրբազան հողը:

Մյուս քան երբևէ՝ մենք պետք է լինենք միաբան: Հիշենք ցախավե՛լի պատմությունը: Միաբանվենք, իրար թև-թևիկունք լինենք, որպեսզի կարողանանք լուծել մեր առջև ծառայած այս բարդ ու դժվարին խնդիրները:

«Է՛ն օրինյալ հողը, ուր ասորիք, պարսիկք, հոնք, ալանացիք, մակեդոնացիք, հռովմայեցիք, արաբք, օսմանցիք ջրհեղեղի պես վրա էկան, հարյուրավոր ազգ ու աշխարհ ոտնակոխ արին, ջնջեցին, սրբեցին, թրի, կրակի մատաղ արին, ուրտեղ որ սար չի՛ մնացել, որ արին չտեսնի, քար չի՛ մնացել, որ մարդ տակով չանի, ու հարի մեր հարևան ազգեր էն-պես են հողի հետ հավասարվել, կորել, որ էսօր ո՛չ նրանց շունչը կա, ո՛չ անունը, բայց սուրբ Հայոց ազգը, անհաղթելի Հայկա որդիքը իրանց կյանքը, թագավորությունը, մեծությունը, փառքը, իշխանությունը, գործը կորցնելն ենտ որ տեսան, թե է՛ն աշխարհակործան ջրհեղեղին, է՛ն գազան ազգերին, որ մեկը մյուսի ոտիցը ճուլուկա՛լ ուր որ կամենում էին գնալ, Եվրոպա թե Ասիա, Հայոց հողովը պետք է անց էին կացել, չեն կարող դիմանալ, աչքըները երկիցը քցեցին, գլխըները գոզեցին, որին ու հազար թրի տակից, հազար կրակի միջից՝ սիրտ-սրտի տված, հոգի-հոգու կպցրած, մինչև էսօր էլ իրանց գլուխը, իրանց սուրբ հավատը, իրանց սուրբ օրենքը է՛ն վեհամեծությունովը պահպանեցին, որի օրինակը աշխարհում ո՛չ էլ էլ ա, ո՛չ կըլի...»

...Ծովն էլ տեղիցը վեր կենա, մեզ տակով չի՛ կարալ անել, ինչ թե օսմանցին յա պարսիկը:

...Հայոց ազգ, ձեր ջանին մեռնիմ... Ջանջանի տվեք, իրար սիրեցեք, դուք է՛ն աշխարհի ծնունդն եք, է՛ն ազգի գավակը, որ աշխարհի ամենայն զարմացրել են ու կզարմացնեն: Դուք, դուք իրար պահեցեք, ինչպես ձեր նախնիքը, դուք իրար թասիք քաշեցեք, ձեր նախնիքը միտք բերեք, ձեր հողն ու ազգը պաշտեցեք...

...Մեղավորը նրանք չեն, մենք ենք: Մենք որ իրար թասիք քաշենք, իրար քոմակ անենք, իրար պայծառացնենք, շենացնենք, ծովն էլ տեղիցը վեր կենա, մեզ տակով չի՛ կարալ անել, ինչ թե օսմանցին յա պարսիկը» (Ն. Արվյան):

ԱՐՑԱԽԸ և ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ԱՊՐԵԶԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ

Համաժողովրդական հանրահավաքն ամփոփել է ԱԳ պետական նախարար Գուրգեն ՆԵՐՍԻՍՅԱՆԸ:



- Ավելի քան յոթ ամիս է՝ Արցախի ժողովուրդը պայքարում է կյանքի, իր պատմության, ներկայի ու ապագայի, իր տեսակի պահպանության, համայն հայության արժանապատիվ գոյության իրավունքի ու հնարավորության համար: Տասնամյակներ շարունակ Ադրբեջանը վարել է Արցախի էթնիկ գոյության քաղաքականություն և այսօր անցել է իր հանցավոր ծրագրերի իրագործմանը: Պլանավորման, ծրագրման, նախապատրաստման փուլերը վաղուց արդեն ավարտվել են, և սկսվել է ոճրագործությունն իրականացնելու շրջանը: Ավելի քան 7 ամիս է, ինչ Արցախի ժողովուրդը ենթարկվում է ֆիզիկական և հոգեբանական բռնության և խոչտանգման սպառնալիքի: Ադրբեջանը Արցախի ժողովրդին կանգնեցրել է սովի առաջ: Ջրկում է այսօր և վաղը ապրելու, գոյատևելու տարրական հնարավորությունից ու պայմաններից: Այդ ամենի նպատակն Արցախում կյանքն անտանելի դարձնելն է, արցախցուն տարագիր դարձնելը:

Հույսով, որ միջազգային հանրությունը, համայն հայությունն ու Հայաստանի Հանրապետությունը կծեռնարկեն Արցախի ժողովրդին էթնիկ գոտու միջ գերծ պահելու որևէ քայլ: Արցախի ժողովուրդը հերոսաբար ու համբերատար կրել է բոլոր զրկանքները: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ միջազգային հանրության պասիվությունն ու Հայաստանի Հանրապետության զիջողականությունը լրացուցիչ խթան դարձան Ադրբեջանի համար՝ ավելի կոշտ ու ծայրահեղ քայլերի դիմելու: Այս ամենին զուգահեռ նսեմացնելով նույն միջազգային հանրության ու միջնորդ երկրների հեղինակությունը:

Այդ պատճառով Արցախում սկսվեց համաժողովրդական շարժում, որը պետք է հիմք դառնա համաժողովրդական զարթոնքին ու համախմբմանը: Եվ այն արդեն իրականություն է: Մենք պետք է ավելի՛ ամրանանք, ավելի՛ համախմբվենք: Խոնարհվում և հպարտանում են ձեզանով, քանի որ տեսնում են, թե ինչպես են ծեր ու մանուկ իրենց բաժին ծանրությունը կրում: Հասկանում են ձեր հիասթափությունը, երբ թիկունքից հարվածներ են ստանում: Ամենատարբեր շրջանակների կողմից փորձ է արվում նսեմացնել մեր պայքարը, շարունակվում են իշխանատենչությունը, անձնական և քաղաքական շահախնդրությունը: Համաժողովրդական շարժումը սթափեցրել է շատերին: Միջազգային


տարբեր հարթակներում իրականացվել են իրազեկման ակցիաներ, ամենաբարձր մակարդակի հանդիպումներ են տեղի ունեցել, միջազգային լրատվամիջոցները ակտիվորեն են սկսել ներկայացնել իրավիճակը, հնչել են բազմաթիվ արձագանքներ, գնահատականներ, և հարցի շուրջ ուշադրությունը նոր ընթացք է ստացել: Մենք կարողացել ենք անել ամենակարևորը՝ վերահաստատել ու ապացուցել, որ Արցախը և Արցախի ժողովուրդը չեն կարող լինել Ադրբեջանի կազմում ո՛չ այսօր և ո՛չ էլ վաղը: Սա քմահաճույք չէ: Սա արցախի ժողովրդի գոյության անսակարկելի նախապայմանն է:

Պետնախարարի համոզմամբ՝ Արցախում ստեղծված իրավիճակն Արցախից դուրս կան չի ընկալվում, կան կան թյուրընկալումներ: Նա արձագանքել է Երևանից հնչող մեղադրանքներին, թե ինչու Արցախում տեղական արտադրության բանջարեղեն չկա. «Շրջափակման ընթացքում Արցախի ժողովուրդը 2023թ. կազմակերպել է ավելի մեծ ծավալի գյուղատնտեսական աշխատանքներ, քան 2020թ. 44-օրյա պատերազմին հաջորդած 2 տարիներին: Այդ ամենը կատարվել է ադրբեջանական զինված ուժերի կրակի տակ, և մեր քաղաքացիների կյանքի ու մահվան գնով: Մեր աշխատանքի արդյունքն է, որ ավելի քան 40 օր, ապրելով լիակատար շրջափակման պայմաններում, Արցախի ժողովուրդը կարողանում է գտնել որոշակի սնունդ՝ սովի չմատնվելու համար»:

Վերածննդի հրապարակից պետական նախարարն արցախցիների միասնական կարծիքը փոխանցեց աշխարհին և կոչ արեց Արցախի անվտանգության երաշխավորներին՝ կատարել իրենց պարտականությունները. «Արցախի ժողովրդի ճակատագիրը կարող է որոշվել միայն Արցախի ժողովրդի կողմից: Որևէ մեկը լիազորված չէ մեր անունից որոշել մեր ապագան: Իսկ Արցախի խաղաղասեր ժողովուրդը պատրաստ է ստանձնել իր բաժին պատասխանատվությունը այդ հասկանալի և անհրաժեշտ կարգավորման գործում: Արցախը և Արցախի ժողովուրդը չեն կարող լինել Ադրբեջանի կազմում»:

...Ամբողջությամբ է Հայաստանի իշխանությունների կողմից բանավոր կամ գրավոր Արցախը Ադրբեջանի կազմում հայտարարելու ցանկացած փորձ: Արցախի ժողովուրդն օգտվել է իր ինքնորոշման իրավունքից, ուստի Արցախը չի կարող դիտարկվել Ադրբեջանի կազմի մեջ, քանզի այն կայացած քաղաքական միավոր է: Պահանջում ենք Հայաստանի Հանրապետությունից՝ հրաժարվել Արցախը Ադրբեջանի կազմում տեսնելու մտահղացումից»:

Հուլիսի 14-ից սկսված համաժողովրդական շարժումը շարունակվելու է: Շարժման մասնակիցները ետ չեն կանգնելու իրենց պայքարից: Այդ մասին հանրահավաքի մասնակիցները երդում տվեցին Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոցում և Հայաստանի զինվորական պանթեոնում՝ Հայրենիքի ազատության համար նահատակված հերոսների շիրիմների առաջ:



ՔԱՅՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԵՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՆԱՏԱՑՈՒՅՑԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆԵՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը Ֆեյսբուքի էջում հայտարարություն է տարածել՝ ի շարունակություն հուլիսի 17-ին Վերածննդի հրապարակում մեկնարկած նստացույցի միանալու որոշման:

Անդրադառնալով նստացույցի միջանկյալ արդյունքներին ու հետագա անելիքներին՝ երկրի ղեկավարը նշել է.

«Հարգելի հայրենակիցներ, Ի շարունակություն հուլիսի 17-ին հայտարարած որոշմանս՝ Վերածննդի հրապարակում մեկնարկած նստացույցին միանալու մասին՝ կուզեի ընդգծել հետևյալ միջանկյալ արդյունքներն ու հետագա անելիքները.

1. Այս ընթացքում հրապարակային ու փակ ձևաչափով գործադրված մեր ջանքերի ու իրականացված միջոցառումների արդյունքում Արդեշահի վրա միջազգային ճնշումը մեծացել է, ինչը դրսևորվել է նաև մի շարք միջազգային հայտարարություններով ու գործողություններով:

2. Մեզ հաջողվել է բարձրացնել միջազգային իրազեկվածության և ուշադրության մակարդակը: Այդ ուղղության գլխավոր միջոցառումը դարձավ հուլիսի 24-ին կայացած իմ հրատապ մամուլի ասուլիսը, որին մասնակցել է բավականին պատկառելի կազմ՝ միջազգային ու սփյուռքյան շուրջ 100 լրագրող 35 երկրից, այդ թվում՝ աշխարհի ամենաառաջատար լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Ասուլիսի արդյունքներն արդեն երեկվանից դրսևորվում են տարբեր հրապարակումների տեսքով:

3. Հաշվի առնելով ստեղծված ծանրագույն իրավիճակը և օգտագործելով մամուլի ասուլիսի ընձեռած հնարավորությունը՝ դրա ընթացքում Արցախը հայտարարել է անդեմոկրատիկ միջազգային հանրությանը կոչ անելով հրատապ հունամիտար աջակցություն ցուցաբերել: Դրա առաջին արձագանքը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն է Արցախի ժողովրդին աղետից փրկելու նպատակով այսօր Արցախ մեծաքանակ հունամիտար աջակցություն ուղարկելու մասին: Կամ Արդեշահը կբացի Լաչինի (Քաշաթաղի) միջանցքը այդ հունամիտար աջակցության առջև, կամ աղետի գոտի հունամիտար բեռների մուտքի հերթական արգելքով, ի լուր աշխարհի, լրացուցիչ կերպով կվերահաստատի իր քաղաքականության ցեղասպանական էությունը:

4. Կոչ ենք անում այլ պետություններին ու միջազգային կազմակերպություններին (առաջնահերթորեն՝ ՄԱԿ-ի համապատասխան գործակալություններին)՝ հետևել Հայաստանի Հանրապետության օրինակին և Արցախի ժողովրդին մատակարարել հրատապ հունամիտար աջակցություն՝ իրենց ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

5. Նաև մեր ջանքերի արդյունքում երեկ Մոսկվայում տեղի է ունեցել Ռուսաստանի, Հայաստանի և Արդեշահի արտաքին գործերի նախարարների եռակողմ հանդիպում, որի արդյունքները, սակայն, մեզ համար ընդունելի չեն:

6. Միաժամանակ սպասում ենք առաջիկա օրերի ընթացքում տեղի ունենալիք այլ հանդիպումների ու միջոցառումների, որոնք, հուսանք, շոշափելի արդյունքներ կապահովեն այս աղետալի իրավիճակի վերացման հարցում: Այդ առումով մենք ցուցաբերում ենք համապատասխան նախաձեռնողականություն և պատասխանատվություն մեր ունեցած սահմանափակ հնարավորությունների շրջանակներում:

7. Կոչ ենք անում Հայաստանի Հանրապետության իշխանություններին՝ առավելագույն ջանքերը գործադրել Արդարադատության միջազգային դատարանի փետրվարի 22-ի հրամանի կատարման և Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորման հարցով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին անհապաղ դիմելու և շոշափելի արդյունքներ ապահովելու ուղղությամբ:

8. Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի մեր հայրենակիցներին խնդրում ու հորդորում ենք հետևողական ջանքերով հնարավորինս մեծացնել ճնշումը միջազգային հանրության հիմնական դերակատարների, հատկապես՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամների (Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի ու Չինաստանի) կառավարությունների, ինչպես նաև ՄԱԿ-ի կառույցների ու Եվրոպական միության նկատմամբ՝ կիրառելով բոլոր հնարավոր միջոցները՝ ուշադրություն հրավիրելու և հրատապ գործողության մղելու նպատակով: Դրանք կարող են ներառել քաղաքացիական անհնազանդության, իրազեկման, բողոքի և այլ ակցիաներ՝ օգտագործելով թույլատրելիության սահմաններում կոշտ ու ոչ ստանդարտ մեթոդներ:

9. Լաչինի միջանցքի բացման ուղղությամբ ճնշումը պետք է մեծանա՝ և՛ քաղաքական, և՛ հունամիտար, և՛ հնարավոր այլ գործիքակազմերի կիրառմամբ: Այդ առումով Արցախի իշխանությունները քննարկում են բոլոր հնարավոր սցենարներն ու քայլերը՝ ըստ զարգացումների կիրառելու նպատակով:

10. Համարելով, որ իմ նստացույցը, համաժողովրդական շարժումը և մնացած բոլոր ջանքերն արդեն որոշակի արդյունք են ապահովել միջազգային ուշադրություն հրավիրելու և գործնական քայլերի մղելու հարցում՝ որոշել եմ դադարեցնել նստացույցը և շարունակել ջանքերս աշխատանքային արտակարգ ռեժիմով: Միևնույն ժամանակ համաժողովրդական շարժման շրջանակներում շարունակվում են նստացույցներ ու այլ ակցիաները մեր այլ հայրենակիցների կողմից, իսկ ես պարբերաբար հանդիպումներ եմ ունենալու նրանց հետ և համատեղ քննարկելու ենք մեր անելիքները»:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՄԱՍՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ

4. Երջափակման գնահատականները.

Արդեշահը միտումնավոր կերպով ստեղծում է Արցախի ժողովրդի համար կյանքի այնպիսի պայմաններ, որոնք ուղղված են Արցախի ժողովրդի լրիվ կամ մասնակի ոչնչացմանը: Միջազգային իրավունքը որակում է նման քաղաքականությունը և որպես ցեղասպանություն և պարտավորեցնում միջազգային հանրության բոլոր պետություններին քայլեր ձեռնարկել՝ կանխարգելելու ցեղասպանության հանցագործությունը:

Արդեշահի պնդումները, թե Արցախի հարցը հանդիսանում է իր ներքին գործ, հիշեցնում է նացիստական Գերմանիայի ղեկավարության արդարացումները Նյուրնբերգյան դատավարության ժամանակ, երբ զանգվածային սպանությունները նույնպես որակվում էին որպես ներքին գործ: Քաղաքակիրթ միջազգային հանրությունը չընդունեց նման արդարացումները և մերժեց ներքին գործերի պատրվակով մարդու իրավունքների զանգվածային խախտումներ իրականացնելու իրավունքի գոյությունը:

Միջազգային հանրության կողմից վճռական գործողությունների ուշացումը օր օրի մոտեցնում է անդամալիության կետը:

Արդեշահ-դարաբաղյան հակամարտություն

Հակամարտությունը չի կարող համարվել լուծված, քանի դեռ չեն լուծվել դրա հիմքում ընկած քաղաքական հիմնախնդիրները, այն է՝ Արցախի ժողովրդի անվտանգության և իրավունքների, ներառյալ ինքնորոշման իրավունքի ճանաչման ու պաշտպանության հետ կապված խնդիրները:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ են համարում ընդգծել, որ արդեշահ-դարաբաղյան հակամարտությունը պետք է կարգավորվի բանակցությունների միջոցով: Արցախի Հանրապետությունը միշտ բաց է եղել Արդեշահի հետ բանակցությունների համար՝ հասնելու հակամարտության հավասարակշռված, արդար և արժանապատիվ կարգավորման: Ելնում ենք նրանից, որ բանակցությունները պետք է անցկացվեն համապատասխան մանդատով օժտված, համաձայնեցված միջազգային ձևաչափի շրջանակներում: Դա թույլ կտա ապահովել միջազգային հանրության գործուն մասնակցությունը բանակցային գործընթացին և դրա լեգիտիմությունը:

Բանակցությունները պետք է հիմնված լինեն երկու կողմերի՝ տարածայնությունները բարեխղճորեն կարգավորելու անկեղծ ցանկության վրա: Դա չպետք է ցուցադրական բնույթ կրի՝ կողմերից մեկի կամը մյուսին պարտադրելու նպատակով:

Բանակցային գործընթացի շրջանակներում միջազգային հանրությունը պետք է երաշխավորի, որ ուժ կամ ուժի սպառնալիք չի կիրառվի: Անհրաժեշտ են նաև միջազգային երաշխիքների գործում մեխանիզմներ, որոնք կապահովեն կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը:

Օարյաստիճան կարևոր է, որ կողմերը գերծ մնան միակողմանի պարտադրանքի միջոցների կիրառումից, ներառյալ՝ քաղաքական, ռազմական և ցանկացած այլ ճնշման միջոցները: Բանակցությունների նպատակը պետք է լինի ոչ թե վերջնագրերի օրհնականացումը կամ պարտադրումը, այլ համագործակցության մթնոլորտի ձևավորումը:

Մարդկանց տառապանքներն առևտրի առարկա դարձնելն անթույլատրելի է: Արցախի տրանսպորտային և էներգետիկ շրջափակումը, որի նպատակը նրա ժողովրդին առավելագույնս զրկանքների ենթարկելն է, պետք է անհապաղ և անվերապահորեն դադարեցվի՝ համաձայն Միջազգային դատարանների որոշումների և արդարության սկզբունքների:

Երջափակման դադարեցումը և մարդկանց տառապանքների թեթևացումը անհրաժեշտ նվազագույն նախադրյալներ կստեղծեն բանակցություններն սկսելու համար և առավել բարենպաստ պայմաններ կծավորեն բովանդակալից քննարկումների համար:

Բանակցային գործընթացի հիմքում պետք է բացառապես լինեն միջազգային իրավունքի նորմերն ու համընդհանուր արժեքները, ինչպիսիք են՝ արդարությունը, արժանապատվությունը և իրավահավասարությունը: Ցանկացած արհեստական սահմաններ, որոնք կարող են կանխորոշել բանակցությունների արդյունքը, պետք է բացառվեն:

Կարևոր է ընդգծել, որ խաղաղ գործընթացի առանցքային հարցերից մեկը եղել է շարունակում է մնալ Արցախի կարգավիճակի հարցը, որը միջազգային իրավունքի տեսանկյունից շարունակում է մնալ չլուծված: Մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքը և ցեղասպանության կանխարգելման անհրաժեշտությունը անառարկելի հիմք են ապահովում արտաքին ինքնորոշման ապահովման ու ճանաչման համար՝ «անջատում հանուն փրկության» կոնցեպտի հիման վրա: Այդ սկզբունքն իր կարևոր տեղն է ունեցել 1991 թվականին, երբ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և Շահումյանի շրջանի խորհուրդները հռչակել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ միջազգային իրավունքի և ԽՍՀՄ օրենսդրության հիման վրա:

Միջազգային հանրությունից սկսվակիցները

Հաշվի առնելով առկա ծանրագույն վիճակը և ահապահոգ սպառնալիքները մեր ժողովրդի ֆիզիկական գոյության դեմ՝ այսօր Արցախը հայտարարում են աղետի գոտի՝ անկախելով միջազգային հրատապ արձագանք և անվտանգային, քաղաքական ու հունամիտար աջակցություն միջազգային հանրությունից՝ կոլեկտիվ և անհատական կերպով: Արցախն այժմ աշխարհում միակ տարածքն է, որը գտնվում է լիակատար մեկուսացման ու պաշարման մեջ՝ առանց որևէ հունամիտար օգնության ու միջազգային ներկայության: Եթե նույնիսկ աղետի գոտի հայտարարելու պայմաններում միջազգային հրատապ աջակցություն չլինի, ապա Արցախը կարելի է հանգիստ կերպով համարել որպես համալեհնորոշման ծամբար՝ իր բոլոր հետևանքներով հանդերձ:

Նամակներ են հղել ԵԱՀԿ ՄԽ համախառնագահ երկրների նախագահներին, որոնք նաև հանդիսանում են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներ, ինչպես նաև ՄԱԿ-ի գործակալություններին, մասնաճյուղային նկարագրել Արցախում տիրող հունամիտար իրավիճակը և պահանջելով իրականացնել գործուն քայլեր՝ իրավիճակին համարժեք արձագանքներու համար:

Հատուկ անցել է միակողմանի քայլեր ձեռնարկելու պահը՝ որպես զանգվածային հանցագործությունը կանխարգելելու վերջին միջոց: Իհարկե, առաջին հերթին 2020թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության կողմերից ու հատկապես Ռուսաստանից ունենք պահանջներ՝ կատարելու անվտանգության երաշխավորի պարտավորությունները, իսկ հատկապես Հայաստանից էլ պահանջում ենք, որ գերծ մնա Արցախն Արդեշահի կազմում ճանաչելու որևէ հայտարարությունից ու գործողությունից՝ հարգելով Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

Պահանջում ենք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդից իր մանդատի և պարտավորությունների շրջանակում վճռական քայլեր ձեռնարկել՝ կանխարգելելու Արդեշահի կողմից իրականացվող ցեղասպան քաղաքականու-

թյունը և ապահովել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի և Մարդու իրավունքների վերոպական դատարանի՝ Լաչինի միջանցքի բացման որոշումների կատարումը:

Այս կապակցությամբ հրատապ են համարում Միավորված ազգերի կազմակերպության, նրա ողջ համակարգի և գործակալությունների ներգրավվածությունը, որոնք հատուկ լիազորված են գործել հունամիտար ճգնաժամերի իրավիճակներում:

Պահանջում ենք Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարից դրսևորել բարոյական և քաղաքական պատասխանատվություն և առաջնորդություն միջազգային հանրությանը զգուշացնելու Արցախի ժողովրդի ծանր վիճակի մասին: Պահանջում ենք պարոն Գոտեռեշից առանց հապաղելու և առանց վարանելու գործի դնել ՄԱԿ-ի համակարգը՝ այս ճգնաժամը լուծելու համար: Ես պատրաստ եմ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, պարոն Գոտեռեշին անձամբ ներկայացնել Արցախում տիրող հունամիտար իրավիճակը առցանց ձևաչափով:

Պահանջում ենք ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հունամիտար հարցերով, ինչպես նաև քաղաքական և խաղաղաշինության հարցերով տեղակալներից՝ գործել հիմա: Բարձրաձայնել Արցախում ճգնաժամի մասին և պահանջել միջազգային հանրության կողմից անհապաղ ջանքերի գործադրումը՝ Արցախում ՄԱԿ-ի մուտքի մանրատ տալու և ներկայություն համար:

Պահանջում ենք ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գործադիր տնօրեններից, Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենից՝ հետևել իրենց մանդատին ու պարտականություններին՝ պահանջել իրենց ներկայությունը Արցախում՝ Արցախի ժողովրդին տեղում հրատապ ու նաև շարունակական օգնություն ցուցաբերելու նպատակով:

Ներգրավված դերակատարներից պահանջում ենք դադարեցնել աջակցություն ցուցաբերել Արդեշահի հանցավոր օրակարգին, ինչը միայն խորացնում է անմեղ մարդկանց տառապանքները և կոչ ենք անում կրկնրետ քայլերի իրականացում՝ երաշխավորելու բարենպաստ միջավայր Արցախի ժողովրդի կայուն անվտանգության և հակամարտության խաղաղ ու արդարացի կարգավորման համար:


Այսօր ցեղասպանությունների և այլ զանգվածային հանցագործությունների կանխարգելումը միջազգային հանրության կողմից ստանձնած պարտավորություն է: Անընդունելի է, որ ցեղասպանության կանխարգելման պարտավորությունը արտահայտվի միայն կողմերին բանակցային սեղանի շուրջ նստեցնելու պատրաստականությամբ: Միջազգային հանրությունը և առաջին հերթին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, որին անդամակցում են նաև ԵԱՀԿ ՄԽ երեք համախառնագահ երկրները, և որը պատասխանատու է միջազգային խաղաղության և անվտանգության համար, այդ թվում՝ զանգվածային հանցագործությունների կանխարգելման համար, տիրապետում է թե՛ մանրատ, թե՛ անհրաժեշտ գործիքակազմով, թե՛ պարտավորությամբ՝ կասեցնելու Արդեշահի ցեղասպան քաղաքականությունը:

Վերջիվերջո, Արդեշահի միջազգային անպատեղիությունը պետք է մի օր կասեցվի, այլապես այն ծնելու է նորանոր դաժանագույն հանցագործություններ, որոնց շեմին ենք գտնվում այժմ:

ԱՀ Նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչություն

ԱԶԳԱՅԻՆ

Ո՞ՒՄ ԿՐԱ Է ՄԵՐ ՀՈՒՅԱԸ. ՆՈՐԻՑ ՕՐՈՐՈՑԻ՞



Բնավ պատահական չէ, որ դժնդակ այս օրերին մեր ժողովրդի մտապատկերում որպես ապագա հերոս ներկայանում է 8-9 տարեկան մի տղա, ամենագետ մի պատանեկիկ՝ Միքայել Հակոբյան անուն-ազգանունով: Հրաշամանուկը մեր, որ մեզանց շատ-շատերի համար դարձել է վերջին հույս, դեպի ապագա ձգվող վերջին ապավեն, տասնյակ հազարներով հետևող ունի ֆեյսբուքյան իր էջում, ավելի մեծաթիվ հիացողներ՝ հեռուստատեսությամբ ու համացանցային հեռուստաալիքներով: Ամենագրավիչը ոչ միայն նրա ուղեղիկի ծալքերում կուտակված դասավորված տարաբնույթ գիտելիքներն են, այլև՝ խոստումը, թե մի օր «գաղտնի գեներ» է ստեղծելու, անշուշտ, ավելացնենք մեր կողմից, հաղ-

թելու համար մեր թշնամիներին, ազատագրելու մեր երկիրը ու կերտելու հզոր Հայաստան: Այս տեսլականը, որը ներկայանում է մանկահասակ մեր հերոսի կերպարանքով, դարերի ու հազարամյակների պատմություն ունի: Այն ուղիղ գծով մեզ կապում է առասպելական վիշապաբաղ մեր Վահագնին, որ ծնվեց, ինչպես մեր Պատմահայրն է վկայում, երկրի ու երկնքի, ջրի ու կրակի երկունքից, որպես խարտյաշ, հուր մագերով ու արեգակ աչքերով պատանեկիկ, որը սլանում է ընդդեմ վիշապ-թշնամիների:

Նույն տեսլականը այլ կերպարանքով մենք տեսնում ենք մեր ժողովրդի պատմության հետագա դարերում, հատկապես՝ օրհասական պահերին: Արաբական արշավանքների ժամանակ մենք նրան հանդիպում ենք ի դեմս Սասունցի Դավթի, որն իր «գաղտնի գեներով», այսինքն՝ կայծակե թրով, երկու կես է ամուսնացնում՝ Սարա Մելիքին, մինչև Առյուծ Միտրը, բազում քաջագործություններից հետո մտնում է քարանձավ, որտեղից դուրս չի գալիս մինչև օրս: Բայց եթե նա մի օր դուրս գա քարե ամրակուռ դռնից, գիտե՞ք ինչե՞ր է անելու...:

Նույն տեսլականի մեկ այլ դրսևորմանը հանդիպում ենք օսմանյան ջարդերի, հալածանքների դեմ մեր անհավասար պայքարի օրերին, երբ թուրքը «մեր հույս թողեց օրորո-

ցին», որի դիմաց «խեղճ մշեցին» «Ջարթիր, լաո» էր երգում, իսկ դեռես պատանի Կիկոյի հայրիկը, որն ընդամենը մի եզ ուներ, այդ եզն անգամ «կուտար ծախու», որպեսզի «թյուֆենը (հրացան) մ' առնեիր իր Կիկոյին ու տաներ գրեթե ֆիդայի...»:

Հիմա բոլոր վիշապները, օձերն ու սողունները հավաքվել են մեր գլխին, Բաքվի մելիքը, Անկարայի սուլթանը եկել են, «կուզեն ջնջիլ մըզի», մինչև ներսում ո՞չ Վահագն կա, ո՞չ Միտր, ո՞չ Դավթ, ո՞չ էլ Անդրանիկ ու Նժդեհ: Ներսում «գործի վրա» են վախկոտ ու խռպոտ Ձեռով Օհանը, Ցառն Վերգոն եւ մյուս վախկոտներն ու ցռանները՝ բոլորն էլ զինված սպիտակ դրոշմներով:

Ո՞ւմ վրա դենք մեր հույսը. կրկին օրորոցի՞: Բայց հրաշամանուկը դեռ պետք է մեծանա, ուժ ու կորով հավաքի, իր «գաղտնի գեներ» սարքի: Իսկ մենք ժամանակ չունենք: Անհամբեր են վիշապները, օձերը, մողեսներն ու մյուս սողունները: Անհամբեր են նաեւ ներսի սողունները, օր առաջ, ժամ առաջ հանձնել եւ հանձնվել են ուզում: Նրանք պատրաստ են հանձնել նաեւ մեր բոլոր հրաշամանուկներին անգամ: Ժողովրդի մի մասը, որը շփոթում է ամեն ինչ, արքայից արքա Տիգրան Մեծին անգամ, պատրաստ է ենթարկվել: Մյուս մասը, որը «չի սիրում քաղաքականությամբ զբաղվել», պատրաստ է հեռանալ: Իսկ մնաց-

յալ մասը, որը տառապում է անզորությունից, սպասում է հերոսին, «գաղտնի գեներով» գալիք հրաշամանուկին:

Ժամանակն է փոխելու մեր պատմության ընթացքը, հրաժարվելու հանդուրժելու, համբերելու, հուսալու եւ սպասելու դարավոր մեր ավանդույթից: Պատմահայրն է դարձյալ, որ մեզ սովորեցնում է, որ հակառակ դարերի ընթացքում արձանագրած ծախողությունների, «բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, արժանի գրոց յիշատակի»: Արիության, քաջության, գործի ժամանակը հիմա է: Դատապարտված ենք հզոր լինելու, ընդմիջտ: Այլապես ոչ ոք, նույնիսկ մեզ բարեկամ ներկայացողները չեն թողնի, որ օրորոցի մեր հրաշք մանուկները զարթնեն, վեր կենան, գաղտնի կամ հայտնի գեներ սարքեն: Հզոր գեներ սարքելու համար հզոր պետություն է պետք: Փոքրիկ Միքայելն ու մեր մյուս հրաշամանուկներն իրենց խոստումը եւ մեր հույսերն իրականացնելու համար պետական պաշտպանության կարիքն ունեն, ավելի ճիշտ՝ պիտի ունենան:

Իսկ ո՞վ է լինելու կամ ովքե՞ր, որ փոխելու են մեր պատմության ընթացքը:

Հակոբ ԱՎԵՏԻՔՅԱՆ
azg.am

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ ԿՐԿԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՇ Է

Այս տարի լրացավ Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման 105-ամյակը: 1918 թվականի մայիսի 28-ին Ռիֆլիսում Անդրկովկասյան ժողովրդավարական Դաշնային Հանրապետության փլուզումից հետո Հայկական ազգային խորհրդի կողմից հռչակվեց Հայկական կամ Հայաստանի Հանրապետությունը: Անկախ Հայաստանի առաջին վարչապետ դարձավ Հովհաննես Բաջազյանը:

Չնայած այն հանգամանքին, որ կարճ կյանք ունեցավ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, բայց այն իր կարևորությամբ ու բախտորոշիչ դերով մնաց միշտ հայ ժողովրդի հետ: Առաջին Հանրապետության և, ընդհանրապես, 1918-1920-ական թվականների հայոց պատմությանը, հողավճանքի, առանձին գրքերի տեսքով անդրադարձել են մի շարք պատմաբաններ, գրողներ, քաղաքական գործիչներ, ինչպես՝ Սիմոն Վրացյանը, պատմաբաններ Հրանտ Աբրահամյանը, Հրանտ Ավետիսյանը, Ծատուր Աղայանը, խորհրդային շրջանի պատմաբան Մակիշ Արզումանյանը, քաղաքական գործիչ Հենրիկ Ազարյանը և ուրիշներ: Հայ գրականությունում անկախության ժամանակաշրջանը գեղարվեստորեն պատկերել է սփյուռքահայ գրող Կոստան Ջառյանը: Գրողի «Նավը լեռան վրա» վեպը բացառիկ վավերաթղթի արժեք ունի՝ ներկայացնելով 1918-1920-ական թվականների Հայաստանը: Եվ իրավ, ինչ-որ առումով թերի կլիներ Հայաստանի Առաջին Հանրապետության ճանաչման ժամանակաշրջանն ու դեպքերն առանց Կոստան Ջառյանի «Նավը լեռան վրա» վեպի:

Վեպի առաջաբանում հեղինակը տալիս է վեպը հասկանալու բանալին, բացատրում իր գլխավոր նպատակը. «Այս վեպը սովորական առումով պատմական վեպ չէ, այլ պատմությունը մի քանի հոգիների, որոնց վիճակվեց ապրել մեր ազգային կյանքի ամենաբախտորոշ ժամանակաշրջաններից մեկում: Նկարագրված անձերը երևակայական են, որովհետև զուտ ստեղծագործական աշխատություններում երևակայությունն ավելի իրական է, քան իրականությունը: Պատմության գիրք չէ, այլ ոգու պատմություն»:

Վեպում նավը պետականության խորհրդանշան է, հերոսական օրերի խոսքը, որ թռնվել է դարերի տառապանքի և պայքարի կրակներում, միաժամանակ, նոր սերնդի կյանքի ու գործի մի յուրօրինակ ծրագիր՝ ուղղված պետականության վերականգնմանը: Ծովի անկայուն տարերքին հակառակ՝ նավը, ըստ Ջառյանի, կայունության խորհրդանշան է: Լեռը Հայաստանն է, որ ապրել ու տեսել է բազմաթիվ հերոսական ու ճակատագրական

պահեր, որ իր պատմությամբ մերթ կանգնել է լեռան լանջին՝ ներբեռն, մերթ լեռան գագաթին՝ ամենավերևում: Լեռն Արարատն է, պատմության քառուղիներում հայի տառապալից ճակատագրի լուռ վկան և հարատևության խորհուրդը:

Գրողի համար անհրաժեշտ էր գտնել մեկին, որի կարիքը ուներ Հայաստանը: Այդ մեկը Արա Չերյանն էր: Բայց մինչև կատարելապես «ուժեղ, համառ, ճակատը տեսիլքով լուսավորված դառնալը» Արա Չերյանը պետք է անցնի ինքնամոտեցման ու ինքնաճանաչման երկար և դժվարին ճանապարհ: Նույն ձևով նա պետք է ճանաչի երկիրը և մարդկանց: «Այն առավոտ, մի փոքրիկ պայուսակ ձեռքին, նավորդի հնացած գլխարկը մինչև հոնքերը քաշած, վերարկուի օձիքը բարձրացրած՝ Չերյանը մեկնեց Հայաստան» [էջ 135]:

Վեպը շատ հստակ ու արտահայտիչ ցույց է տալիս վերադարձի ազգային մոտիվը: Եթե գրողներից Բաֆֆին՝ իր ազատագրական վեպերի ռոմանտիկ հերոսների, Մուրացանը՝ գլխավոր հերոսի միջոցով ցույց են տվել ազատության ուղին գեներով ու պայքարով, ընդհուպ մինչև հերոսի կործանում, ապա Կոստան Ջառյանը Արա Չերյանի կերպարով միշտ կյանքի մեջ էր, նրա ընտրած ռոմանտիկ հերոսը զգալիորեն հեռու էր կյանքից հեռանալու տիրազին ձգտումից: Իհարկե, վեպում հեղինակն անդրադարձել է հերոսի անհատական տրամադրություններին, անձնական վշտին, սիրո տառապանքին, երբ թողնում էր Դաշեն-կային, սակայն այս բոլոր զգացումները հեղինակը, կարծես թե շրջանցում է՝ ցույց տալու հայրենիքի փրկության վեհ գաղափարը: Այս կերպ Ջառյանն ստեղծել է անձնագոհության բարձր զգացում և այն ավելի է արժևորում վերադարձով: Հայրենիքից դուրս երկար ժամանակ դեգերումների մեջ ապրած հայը վերջապես վերադառնում է հայրենիք՝ վերադարձին ավելի ընդարձակ իմաստ հաղորդելով: Եվ միայն այն միտքը, որ օտար և քաղաքակիրթ երկրներից վերադառնում է հայը՝ հայրենիքը շենացնելու նպատակով, թերևս վեպի լավագույն գաղափարն է:

Երկրի սահմանները ճեղքվել էին, թշնամի օրեցօր խորանում է դեպի երկրի սիրտը, իսկ ներսում թշվառությունը ջլատում էր ժողովրդին: Պատերազմը Հայաստանում ամեն ինչ տակնուվրա էր արել, թողել մեծ ավերումներ: Բոլորը մեկ մարդու պես գիտեին՝ թշնամին վիզը երկարած հսկում էր սահմանի շուրջը՝ հարմար առիթ փնտրելով: Ներկայացնելով այս պատկերը՝ հեղինակը վեպում քննադատում է Հայաստանի քաղաքական ուժերին, որոնք

կանգնած են Արևմուտքի ու Ռուսաստանի ընդդրության առջև: Արևմուտքի կողմնակիցներն արդեն Փարիզի պատվիրակությանը նամակ են հղել և հետևում են Վիլսոնի այն հայտարարությանը, թե հայկական ճանաչման պատմության հարցն է, և ինքն է լուծելու այդ: Մյուս կողմը Հայաստանի միակ փրկությունը տեսնում է Ռուսաստանի հետ (վեպի երևանյան տարբերակ) և ուղիղ հակառակը հավաստիացնելով՝ մշում. «...Մենք ծամում ենք այն հաշիվը, որ ուղիղները գցում են մեր անի... Ե՞րբ պիտի իսկականացնենք, որ այսպես կոչված մեծ պետությունները, չնայած իրենց գեղեցիկ հայտարարություններին, չնաբար խաբում են մեզ: Նրանք մեզ դավաճանել են անցյալում և կշարունակեն դավաճանել... Տո, մոռացա՞ք Ձեթյունը, մոռացա՞ք 95-ի կոտորածները, մոռացա՞ք Ադանան... Տեսե՛ք, ինչ է անցնում Կիլիկիայում. ֆրանսիացիները զենքերը ուղղում են մեր կամավորների վրա, որոնք կռվեցին իրենց հետ և նպաստեցին հաղթության... Կարող եք պատկերացնել՝ ինչ կկատարվի վաղը, երբ դեպքերը մոռացվեն, և մարդիկ հոգնեն և ուզեն ամեն ինչ մոռանալ... Լավ իմացե՛ք, մեզ կծախեն, կդավաճանեն և նույնիսկ կմոռանեն... Ինչ ուզում եք ասե՛ք, մեր միակ փրկությունը Ռուսաստանն է... (ընդգծումը մերն է - Ն. Ա.)» [էջ 229]:

Թեպետ Չերյանը տեսնում և խորապես զգում է քաղաքական անցուղարձը, սակայն արձագանքում է մի տեսակ անուղակիորեն: Երկրի քաղաքական կյանքն ու իրավիճակը, թվում է, հեռու են նավապետ Չերյանից, թեև նա իր ելույթում ամեն մի քննադատություն է այդ կյանքը: Բուլկիկներն այլևս բացահայտ քարոզում են քաղաքի փողոցներում, ժողովուրդը հուսահատ է, իսկ Կարսը՝ ընկած: Չերյանը բուլկիկյան քարոզների շարունակությունը համարում է մեր իսկ թուլությունն ու սպիկարությունը, որի պատճառով Կարսն առանց մի կրակոցի հանձնվում է բուլկիկյան պրոլետարիատի եղբայր և բարեկամ թուրքին՝ մեր դարավոր թշնամուն:

Չնայած հեղինակը ժխտում է վեպի պատմական լինելու փաստը, այնուամենայնիվ, վեպում տեղ են գտել մի շարք պատմական դեպքեր. Սարդարապատի հերոսամարտ, մայիսյան բանվորագյուղացիական մարտեր, Հայաստանի Առաջին Հանրապետության անկախացման շրջան, 1920-ականների Հայաստանի ու տարածաշրջանի քաղաքական, սոցիալ-տնտեսական իրադրություն և այլն: Դարեր շարունակ պետականությունից զուրկ հայ ժողովուրդը պետականություն է ստացել: Ի՞նչ է խորհում և ի՞նչ է զգում ժողովուրդը, ինչպե՞ս է

պատրաստվում նվիրվել պետականություն կերտելու գործին: Սակայն բացի ժողովրդից ավելի մեծ անելիք ունեն քաղաքական ուժերը, և հեղինակն անընդհատ անդրադարձ է կատարում իշխանությանը. ի՞նչ սպասելիքներ ունի ժողովուրդը իշխանությունից, ի՞նչ քայլեր են անում իշխանությունը և մեծ պետությունները: Այս հարցերին պատասխանում է վեպը՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ժամանակի և նրա նախօրյակի պատմական բնորոշ իրադարձությունների ռեալիստական պատկերմամբ:

Ինչպես նկատում ենք, վեպում նկարագրված հայաստանյան իրադարձությունները պատմական ստույգ տեղեկություններ են 1918-1920-ական թվականներից: Դեպքերը տեղի են ունենում նորանկախ Հայաստանում և Հայաստանի շուրջ: 1918թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված պայմանագրից հետո Թուրքիան Հայաստանին դրել էր անելանելի դրույթային մեջ: Հայաստանի տարածքն այդ ժամանակ չէր անցնում անգամ 12 հազար քառ. կիլոմետրից: Առաջին աշխարհամարտում Թուրքիայի և նրա դաշնակիցների կրած պարտությունն ստիպեց թուրք գավառներին՝ հեռանալ Հայաստանի բռնազավթված տարածքներից: Սակայն, չնայած պարտությանը, թուրքերը չէին հրաժարվել Հայաստանը վերագրավելու և այն՝ որպես պետություն, իսպառ վերացնելու ձգտումից: Այդ նպատակով նրանք վարպետորեն կիրառում էին Անգլիայի, Ֆրանսիայի և խորհրդային Ռուսաստանի առձևատուներ՝ Կովկասին տիրելու համար: Հայաստանի դաշնակից տերությունները, որոնք այդ տարիներին կարևորում էին Արևմտյան Հայաստանի տարածքների ազատագրումը, ոչ միայն չիրագործեցին իրենց խոստումը, այլև ավելի սրեցին հակամարտությունը նորանկախ պետությունների միջև:

Անդրադառնալով մեկ դար առաջ արձակագրի բարձրացրած հարցերին՝ տեսնում ենք, որ կրկին հայ միտքը արևմտյան և արևելյան հայացքների բախման ու արմատավորման դաշտի է վերածվել: Հայ ժողովրդի համար կրկին ճակատագրական պահ է, պատմությունը կրկին մեզ կանգնեցրել է ընտրության առաջ՝ հասկանալ սեփական լինելության խորհուրդը, կարողանալ արտածել մեր պատմության փիլիսոփայությունը: Երկիրը չի մեռնի, քանի որ այսօր էլ ունենք Արա Չերյաններ, որոնք պատրաստ են օտար ափերից վերադառնալ և տեր կանգնել սեփական երկրին:

Նանիկ ԱՐԱՍՅԱՆ

ՊԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ

ՐԱՖՅԻ. ԴԱՏԱՐԿ ԸՆԴՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԵ ԽԱՐԿՈՒՄ



Ջարմանալի բան է հույսը:

Նա մարդերի մեջ հայտնվում է երկու կերպարանքով. մեկ, որ մարդը գործում է, աշխատում է և ամենակին չէ թուլացնում իր եռանդը, և հույս ունի, որ կհասնի իր նպատակին: Մյուս, որ մարդը ոչինչ չէ շինում, ծուլ է, հանգիստ իր տեղը նստած է և հույս ունի, թե մի օր կստանա այն, ինչ որ ցանկանում է:

Մեր խոսքը վերջին տեսակի վրա է:

Կան աղքատներ, որ միշտ երևակայում են, թե մի օր գանձ կգտնեն և կհարստանան: Դուք քննեցե՞ք մի ստրուկ և ծուլ ժողովրդի առակները, առածները, լեզուները ու հեքիաթները և կտեսնեք, որ նրանց մեծ մասը թաքուցած գանձերի վրա է: Աղքատի երևակայությունը մի ուրիշ բան չէ կարող ստեղծել: Այնպես էլ քաղցած հավը երազումը կուտ է տեսնում և սկսում է իր ոտները կտցահարել...

Հույսը մի անդունդ է, որի անեզրական դատարկության մեջ մարդը միխթարվում է այն բաներով, որ իսկապես չունի:

Դարտակ հույսը ծուլացնում է մարդուն, խլում է նրանից իր ինքնագործունեությունը և զրկում է տուրքի աշխատությունից: Դարտակ հույսը մարդուն ամեն բան դրսից է սպասել տալիս. նա չէ թողնում, որ մարդ կանգնի իր սեփական ոտների վրա: Նա միշտ նեղուկ է որոնում: Եւ այս պատճառով մարդկային առաջադիմության մեջ չկա մի ավելի վնասակար բան, քան թե ցնորամիտ հույսը... Նրա խաբեական երազների մեջ մարդ գրկվում է իր բոլոր ցանկությունների սովերների հետ:

Ինչ որ գործում է դարտակ հույսը մի անհատի կյանքի մեջ, նույնը գործում է նա մի ազգի պատմության մեջ: Քննեցե՞ք մի ազգի պատմություն և այդ թուր լինի մեր ազգի պատմությունը, և կտեսնեք, թե որքան մեծամեծ վնասներ է կրել նա, որքան կորցրել է դարտակ հույսերից իրապուրված, և տակավին չէ խրատվել իր սխալներով:

Սիս 850 տարի է, որ Հայաստանը մոնղոլական ցեղերի լծի տակ հեծում է. քաղաք չմնաց, որ մի քանի անգամ նրանցից կործանված չլինի. մեր աշխարհում մի քիչ տեղ չմնաց, որ նրանք արյունով չողողեին, տաճար չմնաց, որ նրանք չպղծեին կամ իրանց կիսալուսինը նրա կաթողիկեի վրա չտնկեին:

Շատ անգամ ամբողջ գավառներ ամայի անապատ դարձան այս բարբարոսների արշավանքներից, շատ անգամ բյուրավոր ընտանիքներ ոչնչացան գերության և հալածանքի մեջ: Սուլթանները հազարավոր լեզուներ կտրել տվին հայերեն խոսելու համար: Անգորայի, Տիգրա-

նակերտի, Խարբերդի և Փոքր Ասիայի շատ կողմերում մայրենի լեզուն կորավ հայի բերանից: Եվ մոնղոլական այլանդակ կերպարանքը գեղեցկացավ, կանոնավոր ձև ստացավ հայոց գեղեցկուհիները բռնությանը դեպի հարեմ քաջ տալով:

Կրկնում ենք. 850 տարի է, որ թուրքերը կատաղի գազանի նման ուտում, մաշում և սպառում են հայոց ազգի մարմինը, և նա համբերում է...

Ասում են, պատմական հալածանքները թողնում են պատմական դիակալություն: Մի ազգ չէ մոռանում մի ուրիշ ազգի բարբարոսությունները, որ գործել է իր նախնիքների դեմ:

Հույսը, պարսիկը ատում են հայերին, որովհետև հայերը ունեցել են նրանց պապերի հետ փոքրիկ հաշիվներ: Բայց հայը ոչ ոքին չէ ատում, չնայելով, որ նա բոլոր իր շրջապատող ազգերից հալածանքներ է կրել, հարվածներ է ստացել: Եվ հայի այս ներողամտությունը առաջ է գալիս ոչ թե նրա քրիստոնեական եղբայրասիրութենից, այլ նրա հոգեկան անզգայութենից...

ԴԻՎԱԿԵՐԸ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՆԵՆ. ԴԻՎԱԿԵՐԸ ԼՈՒՐ ԶԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ...

Այո՛, 850 տարի է, որ հայը մոնղոլական կրակի մեջ այրվում է և մի ձայն, և մի բողոք չէ բարձրացնում: Դա հայի մեռելության նշանն է, որ նա պատվի, ինքնասիրության և ազատության զգացում չունի: Ասում ենք մեռելության, և ոչ ստրկության, որովհետև դրանով չափազանց պատված կլինենք նրան, որովհետև ստրուկը գոնյա իր սրտում թաքցրած ունի մի խուլ ատելություն դեպի իր բռնակալը, և հարմար միջոցում դուրս է ժայթքում: Բայց հայը այդ էլ չունի:

Հայը ունի այն երազական ցնորքը, որ մենք հույս կոչեցինք, որով ասպրում են, որով միխթարվում են ծուլ և դանդաղկոտ ժողովուրդները, թե մի օր գերբնական կերպով ազատված կլինեն...

Ահա՛ զարկեց ժամը, և Տաճկաստանի հարստահարված քրիստոնյաների վիճակը պիտի որոշվի: Քաղաքագետները դրան կոչում են արևելյան հարցի լուծում: Այս բազմադարյան խճճված հանգույցը պետք է լուծվի սրով: Հարստահարված ազգերը սուր բարձրացրին, և մի հզոր պետություն նրանց պաշտպան հանդիսացավ, կոտորածը սկսվեցավ, և տակավին շարունակվում է...

Բայց ի՞նչ արավ հայը: Ոչինչ: Նա իր տեղում հանգիստ նստեց և խոտի նման կռվողների ոտքի տակ տրորվեցավ, և նրանց պատերազմական փոշու մեջ խեղդվեցավ: Հայի գլխին կատարվեցավ այն առածը, թե՛ «ՉԻՆ ՈՒ ՋՈՐԻՆ ԿՈՎԵՑԱՆ, ԵՇԸ ՄԵՋՏԵՂՈՒՄ ՍՍՏԿԵՑԱՎ»:

- Ի՞նչ կարող էր անել հայը, հարցրե՞ք բարեկամներիցս մեկը, երբ մի օր այս առարկայի վրա խոսում էինք:

- Կարող էր ինքն էլ գեներ բարձրացնել, պատասխանեցի ես:

- Նա այդ բանի մեջ շնորհք չունի:

- Ուրեմն ոչինչ պահանջելու իրավունք ևս չունի:

- Ինչո՞ւ:

- Որովհետև ազատություն տրվում է այն ազգերին, որոնք իրանց

ազատությունը սրով պաշտպանել գիտեն: Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց զոհերի փրկություն:

- Բայց դուք մոռանում եք ընդհանուր մարդասիրությունը, - ասաց բարեկամս:

- Դա մի ուռնակ է, որով որսում են մեզ նման հիմարներին՝ կրկին ստրկացնելու համար:

- Բայց դուք մոռանում եք, որ մեր օգուտը մեր լուրջան և մեր հանգստության մեջն է...

- Այդ ես հասկանում եմ, հայը միշտ սովոր է այսպես մտածել. «Թող ուրիշները փրթեն, ես կխիչտեմ»: Այժմս էլ երևակայում է նա օգուտ քաղել ուրիշի թափած արյունից:

- Բայց ես հույս ունեմ, հաստատ հույս ունեմ, - կրկնեց բարեկամս, - որ այս պատերազմով արևելյան հարցը կլուծվի, և հայն էլ կստանա իր մասն ու բաժինը:

- Դարձյա՞լ հույս... Ռամկորեմ ասում են. «Հույսը ցանցից ու տեղումը ոչինչ բուսավ»:

Մեզանից շատերը այդ հույսը ունեն: Բայց թե ի՞նչ հիմքի վրա է կայացած նա, հայտնի չէ:

Միայն մենք ուրախանում ենք, երբ եվրոպական որևիցե լրագիր հայերի մասին ծուռ ու սխալ կերպով մի բան է հայտնել: Մխթարվում ենք, որ եվրոպացին արժան է համարել արհամարհված հայի մասին խոսել: Մենք միխթարվում ենք, երբ եվրոպայի որևիցե քաղաքում, մի ժողովի մեջ հայկական հարց է բարձրացել: Տեսե՞ք, ասում են, մեզ վրա ուշադրություն են դարձնում, մեր բանը արժան է... Թուրքիայի հայը բայուհետև ազատ է... Մենք ուրախանում ենք, որ սուլթանը հայոց պատրիարքի հետ ողորմածությամբ է խոսացել, նրան բարձր պատվանշանի է արժանացրել. այդ բարձրագույն գուրքը ազգին է վերաբերում, ասում ենք, և միխթարվում: Մենք ուրախանում ենք, մտածելով, որ ռուս պատերազմը քրիստոնյաների իրավունքի և ազատության համար է հրատարակել. ուրեմն հայն էլ օգուտ կքաղի ռուս զինվորի թափած արյունից:

Եվ ուրիշ շատ բաներ մտածում ենք մենք:

Շա՛տ լավ: Եվրոպացին խոսում է իր լրագրի մեջ, խոսում է իր ժողովների մեջ, ռուսն էլ արյուն է թափում, բայց ի՞նչ է անում ինքը՝ հայը:

Նա իր տեղում անհոգ նստած է, նա լուռ է:

Մի լրագիր, մի ազգային թերթ միայն իր բողոքը պատահում է: Բայց նրա ձայնը կարող է քանակել եվրոպայի ակաջներին, քանի որ նույն իսկ հայոց լեզվից խլացած են նրա համար: Այս լրագիրը առաջարկեց մի խումբ երիտասարդներ ուղարկել եվրոպայի գլխավոր քաղաքներում մեր ցավերը հրատարակելու համար: Կատարվեցավ: Այս լրագիրը առաջարկեց կազմել մի գիտնական ընկերություն և հայերի բոլոր հարստահարությունները առանձին գրքույկներով և զանազան լեզուներով հրատարակել, ու ամեն տեղ տարածել:

Կատարվեցավ: Այս լրագիրը հայտնեց, թե հասել է այն ժամանակը, երբ մեր եղբայր փրկության համար հարուստը չպետք է խնայե իր արծաթը, գիտնականը չպետք է խնայե իր հանճարը, եկեղեցականը

չպետք է խնայե իր ազդեցությունը ու ջանքը, իսկ աշխարհականը, ռամիկը չպետք է խնայե իր արյունը: Այս լրագիրը շատ բաներ առաջարկեց, շատ բաներ խոսեց, բայց ի՞նչ արեցին կարդացողները: Ոչինչ:

Ուրեմն ի՞նչ կարող ենք հուսալ քանի որ այսպիսի անդամներից է բաղկացած մեր ազգությունը: Հարուստը իր փողն է պաշտում: Գիտնականը եռանդ և անձնագոհություն չունի: Եկեղեցականը անտարբեր է մնում: Աշխարհականը, ռամիկը սիրտ չունի, սիրտը մեռած է...

«Մեր լուրջան մեջ են մեր շահերը», - ասում են հիմար իմաստունները:

Բայց գիտե՞ք հայի առածը՝ «Մինչև երեխան լաց չէ լինում, մայրը ծիծ չէ տալիս»: Եթե այրական քաջություն չունենք, գոնյա երեխայի տրտուները ունենանք. եթե ոչ, եվրոպան մեր լուրջանը բոլորովին ուրիշ կերպ կքաջատրե. նա կմտածե, թե Տաճկաստանի հայը գոհ է իր վիճակից. և իրավունք էլ ունի այսպես մտածելու:

Ո՛ր մնացին 4. Պոլսի այն տաք գլուխները, որոնց բերանում անդադար հնչվում էր՝ «ռևոլյուսիոն մը ընելու է» խոսքը: Ո՛ր ծակը մտան այն ցնորամիտ երգիչները, որոնք իրանց տաղերի մեջ Հայաստանի անկախությունն էին երգում: Եվ ո՞ր օրվա համար էին այն ֆրանսիագետ և անգլիագետ պարոնների գրիչները, որոնք շատ անգամ մտածում էին այդ լեզուներով լրագիրներ հրատարակել՝ հայոց ցավերը եվրոպային հայտնելու համար:

Բոլորը լռվեցան, երբ տեսան բաշխողներին սվինները: Բավական չէ, որ օտարը հայի մասին խոսում է. պետք է նա ևս, եթե չբարձրացրեց իր սուրը, գոնյա բարձրացրե իր ձայնը: Բայց այս բանի մեջ ևս նա շնորհք չունեցավ: Մինչև այսօր մի պաշտոնական ձև ունեցող բողոք չհայտնվեցավ հայերի կողմից: Մինչև այսօր մի ազգային պատգամավորություն չդիմեց ուր որ հարկն էր: Ժողովուրդը ոչինչ չարեց. ոչինչ չգործեցին և ժողովրդի ներկայացուցիչները:

Այսպես չէ, որ մենք ենք մտածում: Մեզանում կան մի տեսակ կարճատեսներ, դժբախտաբար նրանց թիվը փոքր չէ, որոնք երևակայում են, թե հայի ապագան Տաճկաստանումն է, թե հայի գոյությունը կապված է թուրքաց կառավարության գոյության հետ: Նրանք մտածում են, թե այժմյան բարբարոսությունները, հարստահարությունները մի օր կվերջանան, երբ թուրքը կքաղաքակրթվի, այն ժամանակ, ասում են, հայը քաղաքացու հավասար իրավունք է ազատ կյանք կվայելե:

Այդ ցնորք է: Թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավագակ, և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա: Նա այսօր բռնությանը հայի տղան, աղջիկը և կինը հափշտակում է և մահմեդական է շինում, բայց էգուց այնպիսի հրապուրիչ ձևեր կմտցնե, որ հայերը իրանց կամքով կդիմեն դեպի մահմեդական մզկիթը: Նա այսօր ավագակի պես է կողոպտում, բայց էգուց այնպիսի օրենքներ կդնե, որ հայը ամենակին չի էլ զգա, որ իր աշխա-

տության վաստակը մեծ մասամբ մտնում է արքունի գանձարանը:

Եվ ուրիշ կերպ լինել կարելի չէ, քանի որ տիրող ազգը աշխատելու շնորհք չունի, և միայն գեներով իշխելու քաջություն ունի: Այսպիսի ազգը պահպանում է իր գործությունը հպատակ ազգերի ծեռքի աշխատանքով: Թուրքը մի զինվորական ազգ է: Երկրի վաճառակամությունը, երկրագործությունը, արհեստը, մշակությունը, բոլորը հպատակ և ոչ մահմեդական ազգերի ծեռքումն է. հայտնի բան է, որ դրանք պետք է աշխատեն թուրքի համար: Թե միշտ այսպես է եղել զինվորական ուժերի վրա հիմնված ազգերի և պետությունների հարաբերությունը իրանց աշխատասեր, բայց անգեմ հպատակների հետ, դա պատմության մեջ մի ապացուցված բան է:

Զինվորական ուժերի վրա հիմնված պետությունը, այլ խոսքով, մի ազգ, որ ամբողջապես բաղկացած է զինվորականներից, մի վիթխարի վիշապ է, որ կլանում է, ուտում է, ոչնչացնում է ինչ որ արդյունաբերում է ողորմելի հպատակի աշխատասեր ծեռքը: Այս վիշապը կուլ է տալիս ամբողջ ազգեր ու ժողովուրդներ իր մարմինը պարարտացնելու համար:

Մենք ունենք պատմություն, 850 տարվա պատմություն, թե ինչպես է վարվել մեզ հետ թուրքը:

Նրա ամեն մի տողը արյունով և արտասուքով է գրված: Ով որ ուրախում է պատմությունը, առաջ ինքն է կընքում իր դատապարտության դատակնիքը: Մի՞թե երեկվա գազանը կարող է այսօր հրեշտակ դառնալ: Մինչև նրա հրեշտակ դառնալը, Թուրքիայում հայի ամուրը միայն մնացած կլինի:

Ժամանակը մոտեցավ, պատերազմը վերջանալու վրա է, բայց հայը տակավին մի շանավոր տնօրենություն չէ արած իր համար: Մինչև այսօր փոքր ի շատե աչքի ընկնող բան, որ երևցավ, դա էր Սեթ Աբգարի տեսարակը: Բայց ի՞նչ մեծ նշանակություն կարող է ունենալ մի փոքրիկ տեսարակ այնքան դարերի և մանավանդ այժմյան ցավերը արտահայտելու համար, որոնց ամբողջ հատորներով գրքեր չեն բավական:

Մյուս, ինչ որ լսվել է մինչև այսօր, ճանճի բզզոցներ կարելի է համարել, որոնք կարող են միայն ծիծաղ շարժել, և ոչ ցավակցություն: Եվ ի՞նչ նշանակություն կարող են ունենալ մեր բզզոցները եվրոպական ընդհանուր մարդասիրությունից զուրկ, եսական քաղաքականության առջև, քանի որ սլավոնական ցեղերի թնդանոթների որոտմունքը, և նրանց թափած արյան մրմունջը ազդեցություն չեն գործում:

Իսկ այդ պետք չէ, որ հուսահատեցնե մեզ: Եվ եթե Թուրքիայի հայի դաժանական դրությունը չի բարվոքվի ևս, գոնյա պատմության դատապարտութենից ազատվելու համար, գոնյա ապագա սերունդի մոտ սևերես չմնալու համար մենք պետք է թափենք մեր բոլոր ծիզը՝ ներկա հանգամանքներից օգուտ քաղելու, և եթե չհաջողվի ևս, մեր որդիքը կասեն, թե մեր հայրերը աշխատեցին...

ՐԱՖՅԻ, Երկերի ժողովածու, հատոր ԺԱ, Երևան, 1991, էջ 7-14

ՏՎՅԱԼՆԵՐ

ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՆ ԲՈՒՅԵՐ

Ավարտվեց Արցախի և ԶԶ բուհերում Արցախի նպատակային տեղերի համար առկա ուսուցմամբ ընդունելությունը: Կարգի համաձայն՝ հուլիսի 18-ին ԳՈՒՍՏՈՒՄԻ և թեստավորման կենտրոնը հրապարակել է մրցույթի հիմնական փուլի արդյունքներով ընդունվածների ցուցակը: Ամենասկզբից էլ պարզ էր, որ բուհերում թափուր տեղեր չառ են լինելու՝ պայմանավորված դիմորդների քանակով: ԱրՊԳ-ում նախատեսված էր 430 տեղ (առանց պահուստային տեղերի): 170՝ անվճար, 260՝ վճարովի, բայց դիմորդների քանակը 270 էր: Բոլոր մասնագիտություններն էլ չեն համալրվել պահանջվող քանակով դիմորդներով: Անգամ այնպիսի մասնագիտություններ, որտեղ նախկինում մրցույթ կար, այս տարի ունեն թափուր տեղեր: Այսպես, «Իրավագիտություն»-ում, որտեղ 30 տեղի համար լինում էր 60-70 դիմորդ, այժմ դրական միավորներ ստացած բոլոր դիմորդներն ընդունվել են, 9 տեղ էլ մնացել է թափուր:

Ստորև ներկայացնում ենք մրցույթի հիմնական փուլից հետո ընդունված դիմորդների վիճակագրությունն ըստ բուհերի և մասնագիտությունների.

Արցախի պետական համալսարան

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» - դիմորդների քանակը՝ 10, ընդունվածներ՝ 4, որից անվճար՝ 4:

«Աշխարհագրություն» - դիմորդ չի ունեցել:

«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» - 18 դիմորդից ընդունվել է 15-ը, որից անվճար՝ 10-ը:

«Կերպարվեստ» - 4 դիմորդից ընդունվել է 4-ը, բոլորն էլ՝ անվճար:

«Նախնական զինվորական պատրաստություն» - դիմորդներ՝ 4, ընդունվածներ՝ 4, բոլորն էլ՝ անվճար:

«Պատմություն» - դիմորդների քանակը՝ 11, ընդունվել է 5-ը, բոլորն էլ՝ անվճար:

«Հայոց լեզու և գրականություն» - դիմորդների քանակը՝ 12, ընդունվել է 12-ը, բոլորը՝ անվճար:

«Ռուսաց լեզու և գրականություն» - դիմորդների քանակը՝ 13, ընդունվել է 9, բոլորն էլ՝ անվճար:

«Անգլերեն լեզու և գրականություն» - 37 դիմորդից ընդունվել է 30-ը, որից 12-ը՝ անվճար:

«Մաթեմատիկա-ֆիզիկա» - 2 դիմորդ, ընդունվել են անվճար:

«Կենսաբանություն-քիմիա» - 9 դիմորդից ընդունվել է 3-ը, բոլորն էլ՝ անվճար:

«Թարգմանչական գործ» - 20 դիմորդից ընդունվել է 20-ը, որից 10-ը՝ անվճար:

«Հոգեբանություն» - 26 դիմորդից ընդունվել է 7-ը, բոլորն էլ՝

անվճար, «Ֆինանսներ» - 28 դիմորդից ընդունվել է 21-ը, որից 12-ը՝ անվճար:

«Կառավարում» - 24 դիմորդից ընդունվել է 11-ը, բոլորն էլ՝ անվճար:

«Իրավագիտություն»-39 դիմորդից ընդունվել է 21-ը, որից 10-ը՝ անվճար:

«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» - 19 դիմորդից՝ 13-ը, որից 10-ը՝ անվճար:

Արցախի պետական համալսարան ընդհանուր ընդունվել է 181 դիմորդ, որից 124-ը՝ անվճար:

ԱրՊԳ ընդունելության կարգում ԱՀ կառավարության որոշմամբ քննություններից հետո կատարվել են փոփոխություններ: «Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա-ֆիզիկա», «Կենսաբանություն - քիմիա», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտություններ ընդունվել են առաջին մասնագիտական քննությունից 7,5 և բարձր միավոր, մյուս մրցույթային քննությունից՝ ցանկացած միավոր ստացած դիմորդները:

ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը նշեց, որ եթե այս փոփոխությունը մտցված չլիներ, «Մաթեմատիկա-ֆիզիկա», «Քիմիա-կենսաբանություն» մասնագիտություններ ընդհանրապես ընդունվածներ չէին լինի: Այս փոփոխություններով հանդերձ՝ այստեղ ընդունվել են համապատասխանաբար 2 և 3 հոգի: Ցավալի է, իհարկե, որ մանկավարժական մասնագիտությունները պահպանելու համար ստիպված են գնալ նման զիջումների: «Մանկավարժության մասնագիտություններին պետք է արտոնություններ տրվեն: Արդեն կա հանրակրթության բարեփոխումների հանձնաժողով, որը պետք է վերլուծություններ անի, առաջարկություններ ներկայացնի, որպեսզի ամեն հնարավորն արվի հանրակրթությանն ավելի մեծ ուշադրություն դարձնելու համար»,- ասաց Յու. Քարամյանը:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության վրա չի տարածվել կառավարության որոշումը: Պարտադիր էին երկու մասնագիտական քննությունները՝ «Հայոց լեզու և գրականություն» և «Մաթեմատիկա»: «Ես այնքան ուրախ եմ, որ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտություն ընդունվել են բարձր միավորներով դիմորդներ, չնայած քիչ թվով՝ 4 հոգի»,- ասում է ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը: Նա այն համոզմանն է, որ հատկապես «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտություն և մեթոդիկա՝ մասնագիտություն և մեթոդիկա՝ մասնագիտություն պետք է ընդունվեն երկու քննությունից դրական միավորներ ստացած դիմորդները, որպեսզի այդտեղից դուրս գան լավագույն դասվարներ: Եվ ոչ թե ընդունվեն մեծ թվով, բայց մաթեմատիկայից տարրական գիտելիքներ

չունեցող դիմորդներ. «Մենք համալսարանը համալրում ենք թույլ դիմորդներով և խնդիրներ ստեղծում դասախոսների համար (խոսքն այն դասախոսների մասին է, որոնք ցանկություն ունեն գիտելիք տալու ուսանողին, ոչ թե աշխատում են միայն աշխատավարձ ստանալու համար), խնդիրներ ստեղծում հետագայի համար: Այդ 4 հոգուն կարող են ավելի շատ գիտելիքներ տալ, քան 20 հոգուն, որոնք զրոյական գիտելիք ունեն մաթեմատիկայից: Թող քիչ լինեն, բայց՝ որակով: Ավելի լավ է պետությունը 20 հոգու համար հատկացված ծախսը դնի 4 հոգու վրա և լավ մասնագետներ պատրաստի: Դպրոցը դրանից միայն կշահի»:

Շուշիի տեխնոլոգիական համալսարան

Ընդունվածները մեծ մասամբ «Դիզայն» բաժնից են: «Դիզայն» մասնագիտության 14 դիմորդից ընդունվել է 12-ը:

«Հագուստի մոդելավորում» - 4 դիմորդ, բոլորն էլ ընդունվել են:

Ընդունվածներ կան «Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն» մասնագիտություն՝ 3 դիմորդից՝ 2-ը:

«Ճարտարապետություն» - 8 դիմորդից՝ ընդունվել է 6-ը:

Մյուս մասնագիտություններից դիմորդներ չեն եղել: Կտրվողներ էլ կային: «Ֆինանսներ»-ում 2 դիմորդ է եղել, չեն անցել: «Պարենամթերքի տեխնոլոգիա», «Ագրոնոմիա»- 1- ական, «Անասնաբուժական»՝ 2 դիմորդները չեն ընդունվել: Ընդհանուր առմամբ ընդունվել է 24 հոգի, որից 22-ը՝ ներբուհական քննություններով:

«Մեսրոպ Մաշտոց» համալսարան

52 դիմորդից ընդունվել է 18-ը. «Անգլերեն լեզու և գրականություն»- 4 հոգի, «Թարգմանչական գործ»- 4 հոգի,

«Կառավարում»- 3 հոգի, «Իրավագիտություն»- 2 հոգի, «Ռուսաց լեզու և գրականություն»-2 հոգի:

«Գրիգոր Նարեկացի» համալսարան

18 դիմորդից ընդունվել է 13-ը, որից «Ֆիզիկական պատրաստություն և սպորտային մարզումներ» մասնագիտությամբ՝ 10 հոգի: «Նախնական զինվորական պատրաստություն» - 2 հոգի, «Հայոց լեզու և գրականություն» - 1 հոգի:

ՀՀ ԲՈՒՅԵՐ

Արցախի նպատակային տեղերի համար հայտագրվել է 102 հոգի, ոչ նպատակային՝ 96-ը: Երևանի պետական համալսարան

ԵՊԳ-ում Արցախին հատկացված էր 15 տեղ: ՀՀ բուհերում Արցախին հատկացված նպատակային տեղեր չընդունվածների հաշվին տեղերի վերաբաշխում է կատարվել:

22 դիմորդից ընդունվել է 20-ը, որից 13-ը՝ անվճար, 7-ը՝ վճարովի: «Թուրքագիտություն» - 1 հոգի «Անգլերեն», ֆրանսերեն հաղորդակցություն» - 4 հոգի,

«Քաղաքագիտություն» - 1 դիմորդ է եղել, չի ընդունվել, «Միջազգային հարաբերություններ» - 4 հոգի,

«Երկրաբանություն»-ը դիմորդ չի ունեցել:

«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» - 7 հոգուց ընդունվել է 6-ը:

«Տեղեկատվական անվտանգություն» - 5 դիմորդից ընդունվել է 5-ը:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

6 դիմորդից 4-ը ընդունվել է.

«Լոգիստիկա» - 2 դիմորդից ընդունվել է 1-ը:

«Համակարգային ճարտարագիտություն» - 1 դիմորդն ընդունվել է:

«Արհեստական բանականության համակարգեր» - 2 դիմորդներն ընդունվել են:

«Թռչող ապարատների ավիացիոն սարքավորումներ» - 1 դիմորդ չի ընդունվել:

«Լեռնային գործ» - դիմորդ չի եղել:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Ունեցել է 11 դիմորդ, բոլորն էլ ընդունվել են, մեծ մասը՝ ներբուհական քննություններով:

«Դիզայն» - 1: «Գրաֆիկական դիզայն» - 3: «Միջավայրի դիզայն» - 3: «Ճարտարապետություն» - 3: «Շենքերի կառուցում, մոդելավորում, նախագծում» - 1:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Հայտագրվել է 4 դիմորդ, բոլորն էլ ընդունվել են:

«Հաշվապահական հաշվառում» - 2 «Շուկայագիտություն» - 2 «Վիճակագրություն»-ը դիմորդ չի ունեցել:

Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան

Ցավոք, «Սոցիալական մանկավարժություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Մաթեմատիկա» մասնագիտություններում դիմորդներ չեն եղել:

Հայտագրվել է 3 դիմորդ, որից ընդունվել է 2-ը:

«Լոգոպեդիա» - 1: «Գեղարվեստական լուսանկարում» - 1:

Կոմիտասի անվան կոնսերվատորիա

Ունեցել է 7 դիմորդ, բոլորն էլ ընդունվել են Արցախում կազմակերպված ներբուհական քննություններով՝ «Ձութակ», «Կլառնետ», «Շվի», «Ակադեմիական երգեցողություն», «Ժողովրդական երգեցողություն» մասնագիտություններով:

Թատրոնի և կինոյի ինստիտուտ

Ունեցել է 2 դիմորդից, որոնք ընդունվել են «Դերասանական արվեստ» մասնագիտությամբ (1-ը անվճար, 1-ը՝ վճարովի)

Հերացու անվան բժշկական համալսարան

Նախատեսված է եղել 25 տեղ, որից 10-ը՝ անվճար, 15-ը՝ վճարովի:

«Բուժական գործ» մասնագիտություն - 45 դիմորդից ընդունվել է 32-ը, որից 22-ը՝ անվճար, 10-ը՝ վճարովի:

«Ֆարմացիա» - 1 հոգի:

Մնացած համալսարանները՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրա և սպորտ, Հայաստանի ազգային ազգարային համալսարան, դիմորդներ չեն ունեցել:

Հայ-ռուսական սլավոնական համալսարանի 1 դիմորդը չի մասնակցել քննությանը:

Ոչ նպատակային տեղերով հայտագրված դիմորդների վերաբերյալ տեղեկություններն այս պահի դրությամբ հայտնի չէին:

Հուլիսի 19-26-ը կազմակերպվել է թափուր տեղերի համար դիմորդների հայտագրումը, որից հետո կատարվել մրցույթ:

Լրացուցիչ մրցույթի արդյունքներով Հերացու անվան բժշկական համալսարան ընդունվել է 5 հոգի:

ԱրՊԳ՝ 9 հոգի, որից, 2-ը՝ անվճար, 7-ը՝ վճարովի:

«Հայոց լեզու և գրականություն»- 4 հոգի (վճարովի)

«Մաթեմատիկա»- 1 հոգի (անվճար)

«Կենսաբանություն»- 1 հոգի (անվճար),

«Իրավագիտություն» - 2 հոգի (վճարովի)

«Տեղեկատվական տեխնոլոգիաներ»-1 հոգի (վճարովի)

Շուշիի տեխնոլոգիական համալսարան

«Դիզայն»-1 հոգի,

«Հագուստի մոդելավորում»- 1 հոգի

«Անոթաչու թռչող սարքերի շահագործում և կիրառում»-5 հոգի

«Գրիգոր Նարեկացի» համալսարան

«Ֆիզիկական կուլտուրա և սպորտային մարզումներ»-5 հոգի, ՆԶՊ -7 հոգ

«Մեսրոպ Մաշտոց» համալսարան

«Իրավագիտություն»-1 հոգի

Շին ՑԱԿ

ՆԵՂ ՕՐԵՐԻՑ ՄԵԿԸ

Ե՛րբ է ավարտվելու, արդյոք, մեր մաքառումների՝ օրեցօր ավելի ամրացող ու անընդհատ ձգվող այս շղթան, հողմերը այս չար ե՛րբ պիտի լռեն: Համբերություն ասածը մարդու համար է, բայց չէ՞ որ այն էլ ունի վախճան, ինչպես որ ունեցել է սկիզբ:

Գնալով ավելանում են մեր ցավ ու հոգսերը, մի գրկանքին ավելանում է մյուսը, և այդպես շարունակ, ու «չես իմանում» որ կողմը թռչես» (Մեծն Թունանյանի «Հառաչանք»-ի ծերունու խոսքերն են):

Ոչ միայն մեծերս ենք տրտմջում այս տառապանքներից, այլև մեր փոքրերը: Նրանք դեռևս «չկա»-ն չեն հասկանում, միայն պահանջում են՝ լավ չպատկերացնելով իրավիճակը:

Այսպես ցավ ցավի, հոգս հոգսի, գրկանք գրկանքի վրա դնելով՝ մի՞թե փորձում ենք Բաբելոնի աշտարակ կառուցելով հասնել Աստծուն... Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ո՛չ, քանզի գիտենք, թե ինչ եղավ այն կառուցողների հետ:

Այսօր մենք նման խառնաշփոթ իրավիճակում ենք և անելիքներս էլ չգիտենք: Օր օրի պահ տալով՝ ոչ մի արդյունքի չենք հասնում, իսկ մարդիկ սոված են ու գրկված ոչ միայն նյութականից, այլև հոգևորից: Մեր շրջապատում պակասել են ժպիտները, լուսավոր հայացքները, մանուկների աղմուկաղաղակը. խի՞ղո՞ւ ու ծիծաղը վերացել են մեր առօրյայից: Քայլում ու ապրում ենք վարանումների ու կասկածների, վախերի ու սարսափների մեջ: Գիշերը քնում ենք՝ փառք տալով, որ օրը խաղաղ անցավ, առավոտյան արթնանում այն զգացումով, որ՝ ինչ լավ է, որ կենդանի ենք ու շարունակվում ենք ապրել:

Մինչև ե՛րբ... Համեմատությունս թող արտառոց չթվա. պատերազմի ժամանակ գոնե հասկանում էինք, որ մարդկային կորուստներով հանդերձ (սա

պատերազմի օրինաչափություններից մեկն է)՝ հավատ ունեինք, որ մեր զինվորն ամուր է կանգնած հայրենի սահմաններին ու թույլ չի տա մեր կործանումը: Իսկ հիմա՞...

Ո՞վ սպանեց այդ հավատը մեր հոգում: Սովորաբար կորուսի առաջնորդներն են իրենց ուսերին առնում մարդկային ծանր բեռը ու ժողովրդին դուրս բերում լուսավոր ափեր:

Մի՞թե այնքան ամուլ ենք դարձել, որ չի հայտնվում ազգապաշտպան այն անհատը, որը կարող է ազգին իր հետևից տանել դեպի արևոտ հորիզոններ:

Ո՞ր է անցյալ դարի 80-ականների մեր հավատը, ոգին...

Ծանր «բեռան» տակ կբա՞ծ՝ դուրս են գալիս տնից՝ ինչ-որ ձևով օրվա հոգսերից ու դառն իրականությունից կտրվելու նպատակով: Ու բախվում են ավելի դաժան իրականության:

Գյուղի խանութում կանգնած սպասում են՝ քաղաք մեկնեն: Մի երեխա է մտնում խանութ. խանութ, որի միայն անունն է մնացել: Չեն ճանաչում երեխային. հավանաբար տեղահանված ընտանիքից է:

Հարցնում է.
- Զուպաչուս ունե՞ք:
- Պրծալա,- լսվում է աշխատողի ձայնը:
Երեխան հեռանում է խանութից: Մի քանի րոպե անց նորից է հայտնվում.

- Ծամոն ունե՞ք:
- Ո՛չ:
Նորից գլխիկոր հեռանում է:
Քիչ անց ներս է մտնում մի երիտասարդ՝ էլի անծանոթ (հավանաբար էլի տեղահանվածներից է):
- Ի՞նչ քաղցրավենիք ունեք:
- Ո՛չ մի տեսակի,- հետևում է խանութի աշխատողի պատասխանը:
Խանութի դատարկ դարակների տակ միայն գինու և օղու շշեր էին: Երրորդ անգամ է հայտնվում արդեն ծանոթ երեխան ու հարցնում.
- Կարտեր ունե՞ք:

- Այո՛,- լինում է պատասխանը:
Փառք Աստծո: Վերջապես երեխայի դեմքը բացվում է դրական պատասխանից, վերցնում է տուփը ու ինքնագոհ հեռանում: Գոնե զբաղվելու մի բան կունենա ու ինչ-որ ժամանակ կմոռանա ուտելիքի՝ քաղցրավենիքի, չուպաչուսի և ծամոնի, պաղպաղակի ու մրգեղենի մասին:

Հետո ներս է մտնում երիտասարդ հղի մի կին: Նա էլ երևի այդ դատարկ դարակներում ինչ-որ քաղցրավենիք էր փնտրում: Նայում են ու մտածում. շուտով լույս աշխարհի է գալու նրա փոքրիկը, որն անհրաժեշտ վիտամիններ չի ստացել շրջափակման պատճառով: Ինչո՞վ է մեղավոր այդ նորեղուկը, որը ևս տուժել է անմարդկային պայմանների հետևանքով:

Առավոտյան ծանր զգացողությունների մի մեծ չափաբաժին ստացած՝ դուրս են գալիս խանութից. ավտոբուսը ժամանել էր:

Գյուղից դուրս գալիս ավտոբուսն արդեն լիքն էր ուղևորներով, որոնց մի մասը քաղաք էր գնում՝ ինչ-որ բան գտնելու ակնկալիքով, մի մասը վաճառելու մթերք էր տեղափոխում քաղաք՝ շատ թանկ գներով «ուրախացնելու» քաղաքաբնակներին, մյուս մասն էլ քաղաքի իր հարազատներին բաժին էր տանում իր ունեցածից:

Շրջվեցողների կանգառում ավտոբուսն այնքան լցվեց, որ շունք բաշելու հնարավորություն էլ չկար. իր տարողունակությունից այն կրկնակի, եռակի ծանրաբեռնված էր: Կարծես մարդիկ հարմարվել են այդ վիճակին, լուռ իրար տեղ էին տալիս, չէին վիճում ու տրտմջում: Այնքազ դարաբաղցի... Նրանց փոխարեն խոսում էին հարցականներով հեղեղված աչքերը, հայացքը, դալուկ դեմքը, մտածողոր ու ցրված ուշադրությունը:

Ի վերջո, հասնում ենք քաղաք, ու ամեն մեկը գնում է իր դարդին:

Դե, առողջ ապրելակերպ է, ոտքով քայլելը՝ շատ օգտակար՝ չնայած ձեռքիդ ծանր տոպրակներին:

Քիչ անց «Կոլցեվոյ»-ում հայտնվում է «1000-դրամանոց» (կանգառում կանգնածներն էին այդպես ասում) երկհարկանի մի ավտոբուս, որն ուրվականի պես շրջում էր քաղաքի Վերածննդի հրապարակից մինչև Արցախի Պապիկ-Տատիկ հուշահամալիր և սպասարկում երեխաներին ու մեծերին: Հետո արժի ճանապարհիս երեխաներ էր տեղափոխում Պապիկ-Տատիկ հուշարձանի տարածք, որոնք ազգային երգ էին երգում զիլ ու բարձր ձայնով՝ ձեռքներին Արցախի դրոշմ բռնած:

Քայլերս ուղղում են դեպի խմբագրություն (կարևոր չէ՞ որ). հոնորար ունեն ստանալու:

Այստեղ Ասուրյան ամեն ինչ տխուր էր. թերթերը հնարավոր չէ տեղ հասցնել, որովհետև տրանսպորտ չկա, ընթերցողներն առաջվա խանդավառությամբ չեն թրթակցում թերթին... Այս ծանր պայմաններում ամեն ինչ թվում է ծիծաղելի:

Այս ամենի ֆոնին մի տիկին «ուրախ», լուր է հայտնում, որ զինվորներին թուրքում են բաժանել (ծխախոտ չկա, երազ է դարձել), և թերթեր են պահանջել՝ թուրքում փաթեթելու համար: Ցավը սեղմում էր կոկորդա:

Դուրս են գալիս ու քայլում բանջարեղենի խանութների կողքով: Նրանց առջև՝ մայթերի վրա, արկղեր էին շարված, որոնց մեջ դրված բանջարեղենն ու մրգերը ոսկու գին ունեին. լուրի՛կ՝ 2800 դրամ, վարունգ՝ 1500 դրամ, սալոր, որ դեռևս լրիվ հասած չէր՝ 2000 դրամ, ծիծակ (հատիկով) 100 դրամ... շարունակվելը ցնդաբանություն է: Խեղճ քաղաքացի, ի՞նչ են ստանում, ի՞նչ են աշխատում, որ կարողանաս այս սահման գներով տուն-ընտանիք պահել... Ի վերջո, գործերս ավարտած՝

մայթով ոտքով իջնում են ավտոբուսի կանգառ: Մոր ձեռքից բռնած՝ մի փոքրիկ էր քայլում մայթով՝ հայացքն անընդհատ կողքի դատարկ խանութներին: Ձեռքին մի փոքրիկ տոպրակ կար՝ մեջը խորանարդիկներով չորահաց (մայրն էր երևի տնային պայմաններում սարքել պոպկորնի կամ չիպսի փոխարեն)՝ գուցե խաբելով, թե խանութից է առել: Մոր հետ դուրս էր եկել երեկոյան զբոսանքի. մի բան պետք էր, չէ՞, որ երեխան զբաղվի: Անցնում էր խանութների մոտով, բայց մոր ձեռքը չէր քաշում՝ որևէ խանութ մտնելու համար: Երևում է՝ մայրն այնքան է ցույց տվել այդ դատարկ դարակները, վաճառատեղանները, որ փոքրիկը մեծի պես հասկանում ու լռում էր: Ահա ինչու են ասում՝ Արցախում երեխաները շուտ են հասունանում:

Չնայած այդ դատարկությանը, ինքնաբերաբար ինքս էլ եմ մտնում մի քանի խանութ, որ անապատային լռություն են հիշեցնում, բայց ոչինչ չգտնելով՝ փորձեցի փախչել այդ իրականությունից: Ես էլ մտածում էի, որ քաղաք են եկել ու գոնե մի բանով կզարմացնեի գյուղում: Հասկացա, որ գյուղում մեր բանջարանոցներում շատ թե քիչ աճեցրած բերք ու բարիքը «շահի քոչվա»-ից ավելի հարուստ է:

Ողջ օրվա ցավերը կծկած՝ դառնացած հոգով տուն են դառնում: Երկար մտորում ու հարց են տալիս. «Ե՛րբ են, արդյոք, գլորելու ու բացելու այս ցավերի կծիկը, որ հոգիս ազատվի ծանր կապանքներից ու թեթևանա...»:

Սա առավելապես վերջին դառն ամիսների մեղ օրերից մեկն էր: Տա՛ Աստված, որ շուտ ավարտվեն այս մեղ օրերը, ու Արցախս ցնճա խախտ ու ծիծաղից:

Չախորդ օրերն էլ կզան ու կանցնեն անդարձ: Արցախցին ուժեղ է, սա՛ էլ կհաղթահարի:

Սուրյայա ՂԱԶԱՐՅԱՆ

ԴԱՍ՝ «ՔԱՉ ՎԱՐՂԱՆԸ» (Օրակարգի դասը)

Իսկ ի՞նչն է, որ այնպես չեն արել, որ հասել ենք այս իրականություն,- հաճախ են հարցնում ինքս ինձ: Գուցե այս հարցադրումն է փոխել իմ մոտեցումը բոլոր դասերի նկատմամբ: Ինչո՞ւ հենց երկրորդ դասարանից մենք երեխաներին պետք է պատմենք պատերազմների, մարտիրոսվելու, հայրենիքի փրկության մասին: Ո՞վ էր Վարդան Մամիկոնյանը, ի՞նչ է անհավասար մարտը, ի՞նչ հրամայեց Հազկերտը, ինչո՞ւ է հայկական ընտանիքներում նախընտրելի դառնում տղաներին Վարդան անունը դնելը, ինչո՞ւ ստեղծվեց «Վարդան Մամիկոնյան» շքանշանը, ո՞ւմ են պարգևատրում դրանով, ինչո՞ւ և ինչպե՞ս սկսվեց և ի՞նչ ավարտ ունեցավ Ավարայրի ծակատանարտը... Այս և մի շարք այլ հարցադրումների պատկերի վրա կառուցվեց Մայրենիքի հերթական դասը: Դասը պատկերավոր և հուզական դարձնելու համար ստեղծվեց «Մամիկոնյան» պատատառը, որի վրա ներկայացվել էին Կարմիր Վարդանը, Վարդանանց աղոթքն ու սրբազան խաչը: Բացատրվեց պատատառի բովանդակությունը: Պատատառի եկեղեցին Վարդանանց պատերազմի մասնակիցներին սրբերի շար-



քին դասելու խորհրդանիշն է: Հենց այստեղ է, որ կարևորվում է «սուրբ», «սրբություն», «սրբավայր» բառերի մանրակրկիտ բացատրությունը: Բացատրվեցին նաև «Քաչ Վարդանը» բնագրի բոլոր բարդ բառերը: Խաչը՝- համուն հավատի մղվող պայքարն է, որին մենք ցայսօր անդավաճան ենք: Իսկ Վարդանանց աղոթքում ասվում է. «Դուք, որ Քրիստոսի կրոնը պաշտպանելու համար

հանձն առաք թափել ձեր արյան վերջին կաթիլը, աղոթեցե՛ք մեզ համար, որ հավատարմորեն պահենք մեր ուխտը Քրիստոսի հանդեպ և պատրաստ լինենք մեր կյանքը զոհելու մեր հավատը պաշտպանելու համար»:

Դասի հարցումը կազմակերպվեց ընթերցանության միջոցով՝ հանձնարարված պարբերություններով:

Դասն ամրապնդվեց հայրենասիրական ասույթներով՝ համահունչ և համապատասխան դարձնելով մեր օրյա իրողություններին: Մենք նաև ստեղծեցինք հայրենասիրական ինք-

նաբուխ ասույթներ:

Առանց հայրենիքի մարդը նման է անթև թռչունի, Հայրենիքը սիրում են հայրենիքում ապրելով: Չկների համար՝ ջուրը, թռչունների համար՝ օդը, իսկ մարդու համար՝ միայն հայրենիքը: Վարդանի կերպարի ամբողջացման համար առավել արդյունավետ էր ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Երեխաները բնութագրեցին Վարդան Մամիկոնյանին և Վասակ Սյունեցուն: Կատարվեց քարտային աշխատանք լեզվական գիտելիքների շուրջ:

Վարդանի կերպարի դուրս բերում, ամբողջացում, բյուրեղացում, գունազարդում՝ քերականական գիտելիքների, լրացուցիչ նյութերի կիրառմամբ ու ամրապնդմամբ: Որպես տնային աշխատանք հանձնարարվեց ստեղծագործական աշխատանք «Իմ հերոսը» թեմայով: Չգիտեմ տխրե՞մ, թե՞ հպարտանամ, որ այսքան հերոսներով ենք շրջապատվել: Այսքան պարտավորություն, այսքան պատասխանատվություն, այսքան խոնարհում, այսքան խնկարկում... Այլևս սխալվելու իրավունք չունենք: Սա՛ է հետայսու իմ բոլոր դասերի առանցքը:

Իրինա ՂԱՐԱՆՅԱՆ Սրբեկ. հ. 12 հիմնական դպրոցի 2-րդ դասարանի դասավար



ԱՌՈՂ ԱՊՐԵՆԱԿԵՐՊ

ՔԱՅԼԵՆԵՔ ԽԵՆԱՅԻ ՈՒ ՀԱՃՈՒՅՔՈՎ

Հայտնի է, որ ոտքով քայլելը կամ զբոսնելը դրական են ազդում մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության վրա: Առողջ ապրելակերպի շատ հետեւորդներ նախընտրում են քիչ օգտվել հանրային կամ սեփական տրանսպորտից՝ նախընտրելով տեղաշարժը կազմակերպել քայլելու միջոցով: Փորձը ցույց է տալիս, որ շատ քայլող մարդիկ դիմացկուն են, ունեն ամուր իմունիտետ, հաճախ չեն հիվանդանում, պահպանում են առույգություն ու վերադառնալուց, հաճախակի են ժպտում:

Մինչդեռ հակառակ տեսարանն է այն մարդկանց մոտ, ովքեր շրջափակված հետեւանքով առաջացած պայմաններում տեսական ժամանակ է՝ ստիպված են զբոսնելու համար եղանակային անբարենպաստ պայմաններում քայլելով հասնել աշխատավայրեր ու վերադառնալու, առօրյա հոգսերը հոգալ տրանսպորտի բացակայության պայմաններում, բավականին հեռու ապրող բարեկամների այցելել, ինչպես նաև հերթերում կանգնել ու ժամերով սպասել որևէ մթերքի կամ հացի զննման հնարավորության: Ֆիզիկական կամ հոգեկան ի՞նչ բավականության մասին է խոսքը, երբ մարմինը հոգնում է, ուժերը չեն հերիքում, իսկ տրանսպորտում անկում է ապրում:

Ի՞նչ անենք եւ ինչպե՞ս օգնենք ինքներս մեզ: Ներքոնշյալ խորհուրդները կօգնեն այլ կերպ նայել իրադրությանը, թույլ կտան ավելի պրոֆեսիոնալ մոտեցում ցուցաբերել քայլքի նկատմամբ: Դրանց հետեւողական կատարումը կմեղմացնի ֆիզիկական ծնշվածության զգացումը եւ թույլ կտա խուսափել հյուսվածությունից:

Որքան էլ պարտադրյալ ինչի, այնուամենայնիվ կարելու է, որ ամեն անգամ քայլելով տեղաշարժվելու համար դուրս գալուց առաջ մեզ տրամադրենք այնպես, կարծես դուրս ենք գալիս զբաղվելու աշխույժ ու օգտակար զբաղմունքով, եւ աշխատել կատարել դա հանդիսով:

ու ժպտալով: Ծիշտ տրամադրվելը մեծ նշանակություն ունի գործի հաջող ընթացքի համար:

Խուսափել գերծանրաբեռնվածությունից: Նախքան հերթական քայլքի դուրս գալը պետք է հիշել հանգստի, վերականգնման պարբերության մասին: Անհրաժեշտ է նախապես պլանավորել ժամանակը նաեւ հանգստի համար: Չափազանց ծանրաբեռնվածությունը եւ հանգստի բացակայությունը պարբերաբար քայլելու ընթացքում հանգեցնում են մարմնի թուլացմանը, իսկ ավելի հաճախ՝ օրգանիզմի հյուսվածանքը: Սա անթույլատրելի է: Եթե ունենք հստակ նպատակ՝ քայլելը դարձնել մեզ համար հաճելի ու օգտակար զբաղմունք, որը նպաստում է ինքներս մեզ տոնուսի մեջ պահելուն, ինչպես նաև մարմնի եւ հոգու կատարելության ու ներդրումակալության վիճակին են ասանելուն, ապա անպայման պետք է ժամանակ հատկացնել՝ հանգստի ու օրգանիզմի վերականգնման համար:

Պատկերացրեք, թե մարդիկն եք եւ ձեր մարզածելը քայլելն է: Անվճար եւ արդյունավետ մարզանք կատարելու համար անհրաժեշտ է կատարել նախավարժանք եւ հետավարժանք:

Քայլելու դուրս գալուց առաջ կատարեք թեթեւ նախավարժանք, կարելի է, օրինակ, տեղում կանգնած թեթեւ վազք կամ թեթեւ ցատկեր կատարել: Դա տաքացնում է մկանները: Քայլելու տեմպը պետք է աստիճանաբար նվազեցնել տեղ հասնելուց քիչ առաջ: Եթե արագ քայլերով շտապել եք հասնել պահանջվող վայր, ուրեմն այնպես հաշվարկեք, որ քայլելն ավարտեք արդեն որոշ չափով աստիճանաբար նվազեցրած տեմպով: Շարունակեք շարժվել ցածր ինտենսիվությամբ մինչև վերջնական կետին հասնելը: Որից հետո մի քանի րոպե տրամադրեք եւ մեղմորեն կատարեք ոտքերի ձգողական վարժություններ: Դա օգնում է նվազեցնել մկանների ցավը եւ թուլացնում է ֆիզիկական լարվածությունը: Իսկ հանգիստ շնչառական վարժու-

թյունների օգնությամբ (թեկուզ մեկ րոպե տեւողությամբ) կարելի է հուզական վիճակը հասցնել ներդաշնակության: Հիշեք, որ նախավարժանքն ու հետավարժանքը կարելու տարրեր են զանազան խնդիրներից խուսափելու համար:

Կորցրած հեղուկի լրացում: Ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ մարդ ծախսում է շատ քանակությամբ հեղուկ, ինչպես շնչառության, այնպես էլ մաշկի միջոցով: Քայլելու ժամանակ, հատկապես եթե ստիպված եք քայլել շոգ եղանակին, պետք է ջուր պահել եւ յուրաքանչյուր տասը րոպե մեկ ջուր խմել թեկուզ մի քանի կույն: Եթե չկա այդպիսի հնարավորություն, ուրեմն անպայման պետք է ջուր խմել տեղ հասնելուց հետո: Սովորական մաքուր ջուրը պահպանում է օրգանիզմում նորմալ նյութափոխանակություն, թարմացնում է հյուսվածքները, վերականգնում է օրգանիզմը:

Սնվել քայլելուց հետո: Այո, այո: Քանի որ ցանկացած ֆիզիկական ակտիվություն հյուսված է էներգիայի պաշարները, ուրեմն ակտիվ քայլելուց հետո 30-40 րոպե չանցած՝ պետք է սնվել (մրգերի, թխվածքաբլիթների կամ այլ սննդի բացակայության դեպքում՝ կարելի է բավարարվել նաեւ անուշ թելով, մուրաբայով, մեղրաջրով): Դրանով վերականգնվում են մկանների վնասված մասերը, եւ փակվում է ածխաջրածնային պատուհանը: Իսկ արդեն երկու-երեք ժամ անց պետք է ընդունել բալանսավորված սնունդ:

Մինչդեռ եթե չլրացվեն էներգիայի պաշարները, օրգանիզմը կսկսի տնտեսել էներգիան, ընդ որում, կարող է նաեւ դադարել իր պաշարները վերանշակել, ինչն էլ կհանգեցնի նրան, որ հաջորդ քայլքի դուրս գալու համար կարող են չբավարարվել ուժերը: Իր հերթին դա կհանգեցնի մկանների ցավ, քաղցած աչքեր ու հոգու ընկճվածություն ունենալուն: **Ընդունել թեթեւ կոնսուրսային ցնցուղ:** Անոթների պատերը սեղմ-

վում են ցրտի ազդեցությունից եւ լայնամուտք ջերմության ազդեցությունից՝ բարելավելով արյան շրջանառությունն ամբողջ մարմնում: Կոնսուրսային ցնցուղը ոչ միայն հանում է մկանների ցավը, նաեւ բարելավում է անոթների պատերի առաձգականությունը: Իսկ ընդհանուր առմամբ տալիս է հուզական բավարարվածություն կատարված աշխատանքից:

Մերսում կամ ինքնամերսում: Թեթեւ թուլացմունք մերսումային շարժումները բարելավում են արյան շրջանառությունը եւ ուրեմն՝ նաեւ սնուցող նյութերի տեղաշարժն ամբողջ օրգանիզմով: Դա նպաստում է մկանների ավելի արագ վերականգնմանը: Սովորեք ինքնուրույն կատարել մերսում, դա կօգնի տնտեսել ժամանակը:

Կուշտ քնել: Առաջին հերթին քուրը պաշտպանական ռեակցիա է ակտիվ ծանրաբեռնված ֆիզիկական աշխատանքից հետո: Պետք է տանջենք ինքներս մեզ, եթե մենք քնի ձգում: Պետք է օգտագործել հնարավորությունը եւ քնել, եթե, իհարկե, կա այդ հնարավորությունը: Երկրորդ, մարդու մարմինը ինքն իր մասին հոգ տանելու զարմանալի հատկություն ունի, եթե դրան չխանգարեն: Մեր օրգանիզմի հրաշալի հատկություններից մեկը քնի ժամանակ աճի հորմոնների արտադրությունն է, որը նպաստում է օրգանիզմի վերականգնմանը: Եթե օրվա մեջ շատ եք քայլել, պառկեք քնելու ավելի շուտ, թույլ լինեք ձեզ ձգվել, հանգստանալ անկողնում, իսկ քնելուց առաջ կամ գիրք կարդացեք (հեռախոսն ու համակարգիչը չի ճշվում):

Կարելու է չմոռանալ հանգստի համար ժամանակ հատկացնել, հատկապես եթե արդեն կա մկանների ցավ եւ հոգնածություն, ընդունել հեղուկ եւ սնունդ, ու ոչ պակաս կարելու է՝ դրական տրամադրվել քայլքին, նույնիսկ եթե ստիպված եք դա անում:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԶՈՒՄԲԱՖԻԹՆԵՍԻ ՄԱՐԶԻՉԻՑ



Շրջափակման հետեւանքով առաջ ա գ ա ծ դ ժ վարությունները չեն շրջանցում ոչ մի ո լ ո ռ : Մարզվող է ա ռ դ կանց եւ մարզիչների համար եւս առաջացել են բազմաթիվ խնդիրներ, որոնց շուրջ զրուցեցինք մեր հերթական հյուրի հետ: «Լուսարար»-ի ընթերցողները ծանոթ են Ստեփանակերտում մարզումներ վարող BASIC-1 (հիմնական բազա) գունբայի ու ֆիթնեսի մարզիչ Լուսարար ՄԱՍԱԿԱՆՅԱՆԻ հետ, որի հետ հաճելի ու օգտակար զրույց ունեցանք: Լ.Մանգակյանը տիրապետում է դիետոլոգիայի եւ սննդաբանության հմտություններին, կատարում է խորհրդատվություն, իսկ մեզ հետ սիրով կիսվեց օգտակար խորհուրդներով:

- Շարունակում եք մարզումները: Շրջափակման հետեւանքով ի՞նչ դժվարությունների եք հանդիպում:

- Չնայած դժվարություններին, շարունակում ենք զումբա-ֆիթնեսի մարզումները: Դա անհրաժեշտ ու կարելու է մեզ համար այս դժվարին ժամանակներում, ընդ որում, անհրաժեշտ է ոչ միայն աղջիկներին, որոնք հաճախում են մարզումներին, այլեւ ինձ համար: Մարզվելն առաջին հերթին կարգապահություն է, որն օգնում է ամրոպղ ու դժվար կացության մեջ հայտնված մարդուն: Երկրորդ՝ մարզումները, առավել եւս զումբան, լավագույն միջոց են սթրեսներից ազատվելու, ընկճախտին չորվելու համար: Օրվա մեջ մեր ապրած բացասական հույզերը հեշտությամբ կարելի է դուրս հանել մարզումների շնորհիվ՝ բացասական թողնելով մարզադահլիճում: Դա օգնում է լիքթաքափվել, կտրվել բացասական հույզեր առաջացնող հանգամանքներից, որոնց մեջ ենք հայտնվել:

Բազմաթիվ դժվարություններ կան, որոնք այս կամ այն կերպ կարողանում ենք հաղթահարել: Առաջինը էլեկտրոնիկայի անջատումներն են, որի պատճառով ստիպված էի լրացուցիչ կուտակիչներ ձեռք բերել մշտական որակյալ երաժշտություն ապահովելու համար մարզադահլիճում: Ինչպես գիտենք, զումբայի մարզումների կարելու բաղադրիչն է երաժշտությունը: Մի կերպ հաջողվեց գտնել համապատասխան կուտակիչներ: Իսկ եթե փորձում ենք պարպուններով ժամը փոխել՝ կապված հովհարային անջատումների հետ, այդ դեպքում էլ աղջիկների համար չի ստացվում հարմար ժամ ըմտրել: Շատ մեծ խնդիր է առաջացնում տրանսպորտի բացակայության հետեւանքով: Մարզիկներից շատերը գալիս են քաղաքի ծայրամասերից կամ տարբեր տեղերից: Հիմա, երբ արդեն տրանսպորտը լրիվ բացակայում է, գանձում են ու հայտնում, որ շատ են ուզում ներկայանալ պարապմունքի, բայց դժվարանում են ոտքով գալ, քանի որ օրվա մեջ ստիպված են եղել ոտքով գնալ աշխատանքի ու գալ, կանգնել հերթերում ու արդեն ուժ չունեն՝ պարապմունքի վայր հասնելու:

- Այն դեպքում, երբ ավելացել է ֆիզիկական ծանրաբեռնվածությունը, այսինքն՝ ոտքով տեղաշարժվելու անհրաժեշտությունը, իսկ նվազել՝ սննդից ստացվող վիտամինների քանակը, ինչպե՞ս պահել բալանս:

- Այս իրավիճակում բալանս պահելը շատ դժվար է, բայց իմ տեսակետը հնչեցնեն, որը, հուսով եմ, կօգնի շատերին: Ուրեմն այսպես. շեշտը դնում ենք լրբազգիների վրա. տվյալ դեպքում դա լրբին է: Պահը բաց չենք թողնում, քանի դեռ կա թարմ կանաչ լրբի, օգտվում ենք, ցանկալի է՝ մեկօրյա ընդմիջում: Դա պարունակում է շատ վիտամիններ, ցելյուլոզ: Այնուհետեւ ծավարեղեն՝ հնդկաձավառ ու բրինձ, որը դեռ կա: Դա էլ ենք ձգտում առավելագույնս օգտագործել սննդի մեջ: Կարտոֆիլ այնքան էլ օգտակար չէ, որքան մենք ենք պատկերացնում ու շատ մեծ դեր տալիս: Համեմայն դեպք, պետք է օգտագործել, քանի որ ունենք այդ հնարավորությունը մեր բանջարանցներից: Բայց պետք է հիշել, որ կարտոֆիլի մեջ պարունակվող օսլան մեծ քանակով պետք է օրգանիզմին: Շատ

կարելու է եղած միզ-բանջարեղենը օգտագործել: Եթե հնարավոր է, հաճախակի պատրաստել աղցաններ կաղանթով ու զազարով, լուրիկով ու վարունգով, նույնիսկ առանց ձեթի կամ կարագ ու մայրենի: Դրանցով կարելի է վիտամինների պաշարը պահել: Գիտենք, որ դժվար է, բայց պետք է ձգտել եղածը գտնել մեծ քանակությամբ ուտել, քանի որ ամառվա պաշարը հենց մրգերից ու բանջարեղենից է ձեռք բերվում: Նպատակային է նաեւ կանաչեղենի օգտագործումը՝ որ կանաչին էլ որ նախընտրում եք: Ջուրը շատ կարելու է մեր օրգանիզմի համար: Պետք է շատ ջուր խմել օրվա մեջ: Կարելու է մի բժժական մաքուր ջուր խմել առավելագույն դատարկ ստամոքսին, իսկ արդեն օրվա ընթացքում 6-8 բաժակ ջուր անպայման օգտագործել: Քանի որ ստիպված ենք շատ քայլել, հետո էլ մարզվել, պետք է խուսափել օրգանիզմի ընթացիկություն: Նախքան մարզվելը, մարզվելու ընթացքում եւ հետո պետք է ջուր խմել: Եթե չեք էլ մարզվում, էլի ջուր խմեք: Շոգ եղանակին քրտնելու միջոցով եւս ջրազրկվում են: Բայց ճիշտ քանակի ջուր օգտագործելուց ու քայլելուց հետո մենք հակառակ՝ հասնում ենք օրգանիզմի մաքրման: Եթե ջուրը սովորական վիճակում այնքան էլ դուր չի գալիս, կարելի է ավելացնել անանուխի թելեր: Դա եւ օգտակար է, եւ հաճելի համ է հաղորդում ջրին: Ամառային շրջանում զովացուցիչ ըմպելիքների բացակայության պայմաններում անանուխով (կիտրոն ավելացնելը եւս լավ կլինի հնարավորության դեպքում) ջուրը ամենավաղ լուծումն է ծարավը հագեցնելու, թարմանալու եւ օրգանիզմում ջրի պակասությունը չառաջանու համար:

- Ինչպե՞ս չհյուսվել պահպանվող մարզումների հիստերիկություն:

- Ջուր խմելը կարելու նախապայման է չհյուսվելու եւ օրգանիզմի նյութափոխանակությունը լավ կատարվելու համար: Ջուրը կյանք է: Դա պետք է հիշել եւ մշտապես հետեւել: Ինչպես նաեւ պետք է վիտամիններով հարուստ սնունդ ընդունել, զոնե այն եղածը, ինչը հնարավոր է գտնել: Մարզվողներն առավել եւս պետք է հետեւեն միզ-բանջարեղեն-կանաչեղենով հարուստ սնունդ ընդունելուն: Բացի ջրից ու սննդից, մարզիչն էլ հասկանալով վի-

ճակը, պետք է վերանայի մարզումների ձևը, տեւողությունը, ինտենսիվությունը: Վերջինս հարկ է նվազեցնել՝ ելնելով եւ շոգից, եւ սննդի պակասությունից, եւ առանց այն էլ ֆիզիկապես շատ ծանրաբեռնած լինելուց: Ինքս վերանայել եմ ու կրճատել ինտենսիվ կարգի մարզումները՝ փոխարինելով դրանք ավելի համազոր վարժություններով ու այդպիսով պահպանելով մարզումներն ու լավ մարզավիճակը:

- Սննդակարգի մեջ մտնում պե՞տք է ունենալ:

- Այո, մտնելը պետք է: Հավի միսը շատ օգտակար է, դա սպիտակուց է մաքուր տեսքով: Սակայն հիմա դժվար թե մարդիկ կարողանան հավի միս գնել: Տավարի ու խոզի միսն էլ լավ է, օգտակար է: Խոզի միսը ցանկալի է օգտագործել առանց ճարպի, խորոված ձևով: Այն լավ հագեցնում է քաղցը եւ համարվում է օգտակար սնունդ: Լավագույն տարբերակ է մտնելի ու բանջարեղենի համադրումը: Նկատի ունեն կերակուրների այն տարբերակները, ինչը կարող ենք մեզ թույլ տալ հիմա:

- Կարո՞ղ եք որևէ բաղադրատոմս ներկայացնել, որն իմանալը նպատակային կլինի ներկա իրավիճակում:

- Բարեբախտաբար, արդեն կա թարմ ճակնդեղ, որը կարելի է մանրացնել քերիչով, ավելացնել ցանկացած համեմունք ու թթվասեր: Կղառնա համեղ եւ օգտակար աղցան: Ինչպես նաեւ մի փոքրիկ կաղամբ ու զազարիկ, լուրիկ ու վարունգ, նույն կերպ խառնել իրար, ավելացնել աղ: Կարող եմ ըմպելիքներից առաջարկել հետեւյալը, որն անվանել եմ «Բլուրկային մոխրտո»: 1 լիտր ջրի մեջ ավելացնել կես թեյի գդալ կիտրոնաթթու, կես ճաշի գդալ շաքարավազ, ավելացնել անանուխի տերևներ ու խառնել: Կարելի է սառեցնել ու խմել սառը վիճակում. դա կօգնի հագեցնել ու զովանալ:

Ուզում եմ ավելացնել, որ աշխատեք մարզումները չթողնել: Դա լավ միջոց է՝ ամենադժվար իրավիճակներում բարձր պահել ոգին ու լինել լավատես: Հավատացեք, որ այս դժվարությունն էլ մեզ կարողանալու հաղթահարել, ու ամեն ինչ լավ է լինելու:

ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ՄՐՅՈՒՅԹ ԱՐՅԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՅԱԿԱՆ ՈՒՄՈՒՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Հարցաշարերը հրապարակված են edu.nk.am կայքէջում և «Լուսարար» պաշտոնաթերթում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- 1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1)

2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ:

- 3. Անձնագրի պատճենը,
- 4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
- 5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Արցախի Հանրապետությունում աշխատելու իրավունքը փաստող վկայագիր,

8. Արցախի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 18-ը ներառյալ, ամեն օր՝

ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան հանրակրթական ուսումնական հաստատությունում: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան 2023 թվականի օգոստոսի 21-25-ն ընկած ժամանակահատվածում:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան ուսումնական հաստատություն:

ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան հանրակրթական ուսումնական հաստատությունում: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան 2023 թվականի օգոստոսի 21-25-ն ընկած ժամանակահատվածում:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան ուսումնական հաստատություն:

Table with 4 columns: No., Name, Description, Points. Includes categories like 'Ապրտունու շրջան' and 'Շուշիի շրջան'.

Table with 4 columns: No., Name, Description, Points. Includes categories like 'Ապրտակերտի շրջան' and 'Շուշիի շրջան'.

ՉԱՓԱՅԻՆ

ՍԱՀՄԱՆ...

Կամո ԲԱԼԱՅԱՆ

Սահմանից այն կողմ ճախրում է հոգիս,
Եվ հեղեղվում եմ լույսից ցնձալից,
Եվ սերն է ծփում ու ալեկոծվում,

Եվ նոր երկինք է, և նոր մի երկիր,
Եվ հանդերձներով ճերմակ գարդարված,
Եվ սուրբ մի քաղաք,

Սահմանից այն կողմ
Մարմինս մոլոր գալարվում ցավից,
Եվ բրբռում է, տառապում, տանջվում,

Մարմինն են քաշում,
Վայելքների մեջ և վերելքների,
Անկունների մեջ կամ վայրէջքների:

Մարմին մեղսալից, մեղքերի շարան,
Գաղթակցության թակարդ ու դարան,
Սիրո, վայելքի, ոսկու, հաճույքի,

Եվ ժամանակն է խոշտանգում նրան,

Եվ ցավերի մեջ և տառապանքի
Եվ կորչում անհետ, փոշի է դառնում
Մի ակնթարթում,

Մարմին մեղսալից, չարին հանցակից,
Բարուն հակառակ,
Եվ ընթացք խարակ, նենգ ու անառակ...

Եվ մարդու որդին Կայենն է ահա,
Նախանձության մեջ և դաժանության,
Եվ չարությունից ու ատելության

Եվ աղոթում է Սուրբ տանը Տիրոջ,
Ներում է փնտրում
Եվ մեղանչում է
Եվ ապաշխարում,

Մյս կողմ սահմանից, արարման պահից,
Երբ դարձավ մեղքին նա ընկերակից,
Աստված վտարեց նրան դրախտից,

Դարձավ չարական, դարձավ հանցակիր,
Մարմինը խոցեց,
Սրբազան երկիր,

Դարձավ չարական, դարձավ հանցակիր,
Մարմինը խոցեց,
Սրբազան երկիր,
Եվ մեծ պոռնիկին, մեծ բանասարկուն,

Եվ հեռացավ նա, Դորից՝ Բարձրալից,
Կյանքն ու ընթացքը՝ արյուն ու ավեր,

Վշտի, ցավի մեջ և տառապալից...

Փրկություն չկա մեղքերի ճահճից,
Եվ հոշոտում է այն անվերջ մարդուն,

Բայց ո՞ւր է հոգին ազատ ճախրանքի,
Որ մղում է վեր,
Տալիս է թևեր,
Դեպի անհունը լույսի, սխարանքի,

Մի՞թե մարմինը մեղկ ու մեղսալից
Նա պիտի լքի,
Մի՞թե մարմինը միշտ պիտի լլկվի
Եվ անվերջ լլկի...

Եվ վերջ չի լինի այս դառը ցավին,
Այս ահ ու դավին,
Եվ տիեզերական անհունների մեջ,
Նավաբեկության ենթակա նավին,

Եվ չկա՞, արդյոք,
Մի՞թե երջանիկ ափը փրկության
Չկա կործանում՝ դաժան երկվության,

Մարմին և Դոգի... Երկիր և սահման...

Մարմինը ստոր, մարմինը չարի,
Արգահատելի և տաժանելի,
Իր պղծության մեջ և նախանձության,

Կռապաշտության և կախարդության,
Բաժանումների, երկպառակության,

Կռիվների մեջ և թշնամության,
Ստախտության, անառակության
Եվ ուրիշ գործեր սաստիկ գարշելի,
Իսկ հոգին հզոր, իսկ հոգին բարի,

Չիշիր դու ոգին պատանի Դավթի,
Եվ զարկը հզոր,
Փլված մարմինը, հսկա Գողիաթի,

Չոգու աշխարհում՝ և ո՛չ մի սահման,
Եվ ո՛չ մի եզերք,
Ո՛չ արճոտ խրամատ, ո՛չ էլ անջրպետ,
Մահվան հեմակետ, ո՛չ էլ դիտակետ,

Խորտակիր դուռը, փրկիր մարմինը,
Ստրուկ ու գերի, ճանկերից չարի,
Որ թպրտում է, կործանվում ահա,
Նյութի աշխարհում
Եվ արմատիկը ու աղետաբեր, ընթացքից դարի,

Եվ մոտ է արդեն Արքայությունը,
Ընթացքն է փոխվում ժամանակների,
Մեր ծանր բախտի...

Վերջին սահմանը և փրկությունը
Բացվող դռներն են՝
ԱՍՏՈՒ ԴՐԱԽՏԻ...

Table with 4 columns: ID, Name, Category, Value. Rows include 23-28 and various categories like 'Շահմասուրի հ/դ', 'Սարտակերտի թիվ 1', 'Վարուհասի պետական'.

Table with 4 columns: ID, Name, Category, Value. Rows include 1-12 and various categories like 'Ֆիզկուլտուրա', 'Պատմություն', 'Մաթեմատիկա'.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌԵ

«Սնանկության մասին» ԱՀ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն՝ 2023թ. օգոստոսի 22-ին ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանի կողմից, ԱՀ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝ ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դատական եղանակով աճուրդ վաճառք՝ հետևյալ լոտերով՝

Լոտ 2 - Հարիչ (միքսեր)՝ Steno PL60L/3VP 1հատ, 2 հատ ամանով, 60 լիտր, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **144.284** ՀՀ դրամ:

Լոտ 3- Կրեմի սրկիչ՝ DE DANIELI RMP83 15լիտր, 1հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **50.331** ՀՀ դրամ:

Լոտ 4- Խմորի գնդեր սարքող սարք՝ RAM S30 1հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **134.218** ՀՀ դրամ:

Լոտ 5- Խմորհարիչ՝ K-M130 130կգ, 1հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **70.800** ՀՀ դրամ:

տեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **167.772** ՀՀ դրամ:

Լոտ 6 - Վառարակ՝ Bassanina zoom 1212, 1հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **335.544** ՀՀ դրամ:

Լոտ 7- Դարակաշար ռատագիտ վառարանի համար՝ 50x70սմ(18դարակ), 7 հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **46.976** ՀՀ դրամ:

Լոտ 8 - Խմորի գնդեր բացող սարք՝ Kempflex SF600/1400 1հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **117.441** ՀՀ դրամ:

Լոտ 9 - Դարակաշար թիթեղներով ռատագիտ վառարանի համար՝ 60x80 սմ(18դարակ), 7 հատ, մետաղյա թիթեղներ(դարակ), 72հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **70.800** ՀՀ դրամ:

Լոտ 10 - Դարակաշար թիթեղներով ռատագիտ վառարանի համար՝ 60x80 սմ(18դարակ), 18 հատ, մետաղյա թիթեղներ(դարակ) 108հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **169.115** ՀՀ դրամ:

Լոտ 11 - Խմորհարիչ՝ EFFEDUE KG.160 160կգ 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **218.104** ՀՀ դրամ:

Լոտ 12 - Խմորի հասունացման խցիկ՝ 294x204x200սմ չափսի, պատերը ինքնաշեն, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **150.995** ՀՀ դրամ:

Լոտ 13- Վառարակ՝ Bassanina rotor 57 1հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **335.544** ՀՀ դրամ:

Լոտ 14- Թիթեղյա դարակներ՝ 150հատ, նախկինում՝ օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **70.800** ՀՀ դրամ:

տեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է **25.166** ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ-ի դեպոզիտ անձնագրի պատճենը, իսկ ԻԱ դեպոզիտ՝ պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախաձեռնի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախաձեռնը կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Հայքիզնեսթանկ» ՓԲԸ, «Ստեփանակերտ» մ/դ հ/հ 1150012179069063:

Աճուրդին մասնակցելու ցանկացողները, աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա 16.00, կարող են հայտ ներկայացնել՝ ԼՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին, հեռ.՝ 097-22-29-22 կամ 043-08-17-33:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ՃԱՆԱԳՎԵԼ ԵՆ ՄՆԱՆԿ

ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (Դատարան) 2023թ. հունիսի 30-ի վճռով պատասխանող Նաիրի Արկադիի Ավետիսյանը (անձնագիր՝ AV0278663, տրված՝ 29.07.2022թ., 070-ի կողմից, հաշվառված՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Թումանյան 25/85 հասցեում) ճանաչվել է սնանկ: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել 30.06.2023թ.:

Դատարանի 30.06.2023թ. որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ա/ծ Արմեն Խաչատրյանը: Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են Դատարան՝ սնանկության մասին այս հայտարարությունից մեկամսյա ժամկետում:

Պարտատերերի առաջին ժողովը նշանակված է 2023թ. օգոստոսի 31-ին, ժամը 12:00-ին, Դատարանի շենքում (հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42):

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

*** ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (Դատարան) 2023թ. հուլիսի 21-ի վճռով պատասխանող Միհր Վլադիմիրի Սարգսյանը (անձնագիր՝ AV0455893, տրված՝ 03.02.2023թ., 070-ի կողմից, հաշվառված՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ստեփան 11 հասցեում) ճանաչվել է սնանկ: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել 21.07.2023թ.:

Դատարանի 21.07.2023թ. որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ա/ծ Արմեն Խաչատրյանը: Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են Դատարան սնանկության մասին այս հայտարարությունից մեկամսյա ժամկետում:

Պարտատերերի առաջին ժողովը նշանակված է 2023թ. սեպտեմբերի 22-ին, ժամը 12:00-ին, Դատարանի շենքում (հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42):

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

*** ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (Դատարան) 2023թ. հուլիսի 21-ի վճռով պատասխանող՝ «Պոլյոտ Մարկետ» ՍՊԸ (ՀՎՀՀ 90038143, պետական գրանցման համար՝ 443.110.12370, հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 2-18) ճանաչվել է սնանկ: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել 21.07.2023թ.:

Դատարանի 21.07.2023թ. որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ա/ծ Արմեն Խաչատրյանը: Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են Դատարան սնանկության մասին այս հայտարարությունից մեկամսյա ժամկետում:

Պարտատերերի առաջին ժողովը նշանակված է 2023թ. սեպտեմբերի 29-ին, ժամը 12:00-ին, Դատարանի շենքում (հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42):

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ԸԻԴ/0005/04/23 ԱՎՏԻՎՆԵՐԻ և ՊԱՍԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ ՄԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

Պարտատեր	Պարտավորության չափը	«Սնանկության մասին» ԱՀ օրենքի 56-րդ և 95-րդ հոդվածով սահմանված հեթանոսություն
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	45 690 688 168,8 ՀՀ դրամ	Ապահովված պահանջ (հոդված 56)
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	2 945 503,25 ԱՄՆ դոլլար	Ապահովված պահանջ (հոդված 56)
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	9 582 536,34 եվրո	Ապահովված պահանջ (հոդված 56)
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	1 678 956 699,7 ՀՀ դրամ	7-րդ հերթ (հոդված 95, մաս 7-րդ)
ԱՀ ՊԵԿ	8 170 200 ՀՀ դրամ	7-րդ հերթ (հոդված 95, մաս 7-րդ)

Ա/Ձ Ա. Ա. ՀԱԿՈՔԱՆՅԱՆ

*** ԱՀ ԸԻ դատարանի ԸԻԴ/0008/04/23 սնանկության գործով առ 30 հունիսի 2023թ. վճռով Ռեբերտ Արարատի Խաչատրյանը ճանաչվել է սնանկ: Դատարանի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ա/ծ Արայիկ Արմենի Հակոբջանյանը: Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են Դատարան՝ սնանկության մասին հայտարարության պահից սկսած մեկամսյա ժամկետում: Պարտատերերի 1-ին ժողովը նշանակված է 2023 թվականի սեպտեմբերի 5-ին, ժամը 12:00-ին Ստեփանակերտ քաղաքի նստավայրում:

ԸԻԴ/0008/04/23 սնանկության գործով կառավարիչ ա/ծ Արայիկ ՀԱԿՈՔԱՆՅԱՆ

ՀԵՏԱԲԵՐՈՂԱԾ ԴԵՊԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵՂՈՆԱՑԻՆ ԵՎ ՀԱՅՎԱԿԱՆ ԼԱՎԱՇԸ
Ալեքսանդր Մակեղոնացու աշխարհամեծ արշավանքն անցավ Հայաստանի կողքով: Բայց և այնպես Եփրատն անցնելիս նա պաշարեց հայկական մի բերդ: Մակեղոնական բանակը երեք օր շարունակ գրոհ ձեռնարկեց, սակայն ամրոցը մնաց անառիկ: Չորրորդ օրը բերդի աշտարակից հայերը կախեցին մի լավաշ:
- Հայերն անձնատուր են լինում,- գեկուցեցին գորավարին:
- Ինչպե՞ս,- հարցրեց Ալեքսանդր Մակեղոնացին:
- Նրանք լավաշ են կախել բերդի աշտարակից:

Կից:
- Լավաշն ի՞նչ բան է:
- Հայկական նրբաթերթ հաց:
- Անձնատուր լինողը սպիտակ դրոշ կկախի և ո՛չ թե լավաշ: Նրանք հաշտություն ու խաղաղություն են առաջարկում: Հայերն ուզում են ասել, թե մարդն աշխարհ է եկել հաց ուտելու և ապրելու ու ո՛չ թե գեներ վերցնելու և կռվելու համար:
- Հիմա ի՞նչ անենք, գորավար տ:
- Վերացրեք պաշարունը և շարժվեք առաջ: Թող հացապաշտ հայերը վայելեն իրենց հացն ու խաղաղությունը: Հացի դեմ չի՝ կարելի նիզակ ճոճել: Աստվածները յոթ տարի շուտ են մահ պարգևում նրան, ով կռիվ է գնում հացի դեմ,- ասաց Ալեքսանդր Մակեղոնացին:

ԴԱՎԻԹ ԱՆՂԱՐԹ
Բյուզանդիայի քաղաքամայր Կոստանդնուպոլսում իմաստասերների մրցավեճ էր: Նրանց մեջ էր քերթողահայր Մովսես Խորենացու քրոջորդի Դավիթը: Չորս ժամ անընդմեջ նա պատասխանում էր Բյուզանդացի գիտունների բազմաթիվ ու բազմաբնույթ հարցերին: Անպատասխան չէր թողել և ո՛չ մի հարցում, ու թվում էր, թե նա հաղթել է իմաստասիրական ճակատամարտում: Բայց ահա մրցավեճի ղեկավարն ասաց.
- Դավիթ, դու փայլեցիր քո իմացությամբ ու պերճախոսությամբ: Մնաց մի պայման: Եթե դու անմիջապես պատասխանես վերջին հարցին,

ապա քեզ կօժենք իմաստասեր: Այն ի՞նչ բան է, որից մարդիկ երբեք չեն ծանծրանում:
Դավիթը պատասխանեց.
- Հացը: Ամեն տեսակի ուտելիք, ինչքան էլ այն համեղ լինի, կարող է ծանծրացնել մարդուն, իսկ հացը՝ երբեք: Ինչ էլ ուտես, առանց հացի չես կշտանա: Հացը մարդուն պետք է ամեն օր: Հացը աշխարհում չի ծանծրացրել և ոչ մի մարդու:
- Ճիշտ է,- ասաց մրցավեճի ղեկավարը: Այս ու այն կողմից վրա տվին.
- Նա անհաղթ է, նա անհաղթ է... Անվանենք նրան Դավիթ Անհաղթ: Այդ մրցավեճից հետո հայ իմաստասերը կնքվեց Դավիթ Անհաղթ անունով:

ՀՈՒՍԱՐԱՐ ԽՍՐԱԳԻՐ՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ	Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info	Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:	Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության՝ 27.07.2023թ.:
---	--------------------------------	--	---	---

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: